*Հավելված*
*ՀՀ հաշվեքննիչ պալատի*
*2022թ. մայիսի 5-ի թիվ 117-Ա որոշման*

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

# ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2022

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ԱՄՓՈՓԱԳԻՐ........................................................................................ 8

II. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ........................ 14

III. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ... 15

IV. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ 17

1. Գյուղատնտեսության խթանման 1022 Ծրագրի՝ Գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում 12004՝ միջոցառման շրջանակներում արձանագրված անհամապատասխանություն վերաբերյալ ........................................ 17

2. Գյուղատնտեսության խթանման 1022 Ծրագրի՝ Գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում 12004՝ միջոցառման շրջանակներում իրականացված մոնիթորինգի վերաբերյալ.......................................................................... 36

3. Գյուղատնտեսության խթանման 1022 Ծրագրի՝ Գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում՝ 12001 միջոցառման շրջանակներում վարկառու տնտեսվարողների վարկային միջոցների նպատակային օգտագործման մոնիթորինգի արդյունքների և հայտնաբերված խախտումների հաշվետվության վերաբերյալ .......................37

4. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում տարածաշրջանները սպասարկող համաճարակաբանների և անասնաբույժների հետ կնքված պայմանագրերի վերաբերյալ ..................... 39

5. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում Նախարարության և ԳԾԿ-ի միջև կնքված պայմանագրով սահմանված հսկողական մեխանիզմների վերաբերյալ ..................................42

6. Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման 1224-12001 Ծրագիր մոնիթորինգի վերաբերյալ ....................43

7. 1058-11001 Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ ծրագրի շրջանակներում Նախարարության թափուր հաստիքների վերաբերյալ ....................44

V. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ....................46

8. Գյուղատնտեսության խթանման 1022 Ծրագրի՝ Գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում 12004՝ միջոցառման շրջանակներում արձանագրված խեղաթյուրումների վերաբերյալ....................46

9. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում ԳԾԿ-ի և ՀԱԲԼԾԿ-ի կողմից 2021 թվականի ընթացքում ներկայացված հաշվետվությունների քանակային /արդյունքային/ ցուցանիշների վերաբերյալ....................47

10. Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման՝ 1224 ծրագիր Կորոնավիրուսով (COVID-19) պայմանավորված մեկուսացված անձանց կեցության ապահովում 11001 միջոցառման վերաբերյալ ....................49

11. 1058-11001 Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ ծրագրի շրջանակներում Նախարարության աշխատակիցների պարգևատրման վերաբերյալ .................... 51

VI. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ....................55

12. Գյուղատնտեսության խթանման 1022 Ծրագրի՝ Գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում՝ 12001 միջոցառման շրջանակներում վարկառու տնտեսվարողներ սուբյեկտների կողմից վարկային միջոցների նպատակային օգտագործման վերաբերյալ.....55

13. Գյուղատնտեսության խթանման 1022 Ծրագրի՝ Գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում՝ 12001 միջոցառման շրջանակներում վարկառու տնտեսվարողների կողմից

պայմանագրով նախատեսված վարկային միջոցների օգտագործման ուղղության մասնակի փոփոխության և ինքնակամ կառուցված շինությունների վերաբերյալ ........ 56

14. Գյուղատնտեսության խթանման 1022 Ծրագրի՝ Գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում՝ 12001 միջոցառման շրջանակներում վարկառուների կողմից գյուղատնտեսության ոլորտում գործունեության դադարեցման վերաբերյալ ........ 59

15. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման վերաբերյալ ........ 61

16. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ ..... 68

17. ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներքին աուդիտի գործառույթի վերաբերյալ ........ 69

18. Զբոսաշրջության զարգացման ծրագիր՝ 1190 ծրագրի Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի շրջանակներում ՀՀ տարբեր մարզերում զբոսաշրջության հետ կապված ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված՝ 12001 միջոցառման վերաբերյալ ........ 70

VII. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ........ 71

VIII. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ........ 73

| | |
|---|---|
| Հաշվեքննության հիմքը | ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի փետրվարի 4-ի թիվ 27-Ա որոշում: |
| Հաշվեքննության օբյեկտը | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն: |
| Հաշվեքննության առարկան | 2021 թվականի պետական բյուջեի մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն: |
| Հաշվեքննության չափանիշները | 1. ՀՀ աշխատանքային օրենսգիրք,<br>2.Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք,<br>3. «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենք,<br>4. «Գնումների մասին» ՀՀ օրենք,<br>5.ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2215-Ն որոշում,<br>6. ՀՀ պետական բյուջեի 2021 թվականի կատարողականի վերաբերյալ հաշվետվություն,<br>7. ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 7-ի թիվ 184-L որոշում,<br>8. Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին պայմանագրեր և այլն: |
| Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը | 2021 թվականի հունվարի 1–ից մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը: |
| Հաշվեքննության կատարման ժամկետը Զննում և Դիտարկում | 2022 թվականի փետրվարի 14-ից մինչև 2022 թվականի ապրիլի 30-ը:<br>2022 թվականի փետրվարի 21-ից մինչև 2022 թվականի մարտի 25-ը: |
| Հաշվեքննության մեթոդաբանությունը | Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների, Պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույցի համաձայն:<br>Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են զննում, |

դիտարկում, հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ, վերակատարում ընթացակարգերը:

**Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում**

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի երրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Գեղամ Հովեյանը:

# ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

| | |
|---|---|
| **Նախարարություն** | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն |
| **ՖԿ** | Ֆինանսավորող կառույց՝ առևտրային բանկերը կամ վարկային կազմակերպությունները: |
| **ԳՖԿ** | Նախարարության «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ» պետական հիմնարկի Գյուղատնտեսական ֆինանսավորման կառույցը: |
| **ՀԱԲԼԾԿ** | «Հանրապետական անասնաբուժաասանիտարական և բուսասանիտարական լաբորատոր ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ |
| **ԳԾԿ** | «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ |
| **Դաբաղ** | «Կենդանիների դաբաղ հիվանդության նկատմամբ՝ բազմավալենտ, սորբինացված, կուլտուրալ, ակտիվազրկված պատվաստանյութ դաբաղի վիրուսի A Իրան 2005 և AG-VII, O Պան Ասիա-2, Ասիա 1, Sindh-08 տիպերի դեմ պատվաստանյութ» |
| **Ծաղիկ** | «Անասնաբուժության մեջ կիրառվող մանր եղջերավոր կենդանիների ծաղիկի և խոշոր եղջերավոր կենդանիների հանգուցավոր մաշկաբորբի ասոցացված կուլտուրալ, չոր, վիրուսային պատվաստանյութ» |

# I. ԱՄՓՈՓԱԳԻՐ[1]

Հայաստանի Հանրապետության հաշվեքննիչ պալատի կողմից իրականացվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության / այսուհետ՝ Նախարարություն/ 2021 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննություն:

Նախարարության 2021 թվականի բյուջեի տարեկան պլանը կազմել է 32,529,894.1 հազ.դրամ, տարեկան ճշտված պլանը՝ 42,220,618.77 հազ.դրամ, դրամարկղային ծախսը՝ 40,036,050.68 հազ.դրամ, փաստացի ծախսը՝ 42,297,846.8 հազ.դրամ:

Նախարարության 2021 թվականի պետական բյուջեի պլանային և ճշտված ցուցանիշների տարբերությունը ներկայացված է ստորև աղյուսակում:

---

[1] Հաշվեքննիչ պալատի մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն հաշվեքննության արդյունքներն արձանագրվել և ներկայացվել է հաշվեքննության օբյեկտի ղեկավարին, որը հաշվեքննության արձանագրությունն ստանալուն հաջորդող 10 օրվա ընթացքում համաձայնության դեպքում ստորագրում է այն կամ գրավոր ներկայացնում է առարկություններ և բացատրություններ: Հաշվեքքննության օբյեկտի կողմից արձանագրության վերաբերյալ առարկություններն և բացատրությունները ներկայացվել են սահմանված 10 օրյա ժամկետի խախտումով:

## 2021 թվականի պլանային ցուցանիշների վերաբերյալ

**Աղյուսակ 1, հազ.դրամ**

| Ծրագիր, միջոցառում,հոդված | | | Տարեկան պլան | Փոփոխություններ տարեկան պլանում ՀՀ կառավ. կողմից | Փոփոխություններ տարեկան պլանում Վերադասի կողմից | Տարեկան ճշտված պլան | Դրամարկղային ծախս | Փաստացի ծախս |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| Ծրագիր | Միջոցառում | Հոդված | | | | | | |
| 1022 | Գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում | | | | | | | |
| | 1022-11001 | 463900 | 300,000.00 | - | 25,000.00 | 325,000.00 | 323,730.70 | 323,730.70 |
| | 1022-12004 | 452200 | 1,633,031.20 | 1,051,563.50 | - | 2,684,594.70 | 2,684,594.49 | 3,045,036.93 |
| 1058 | Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ | | | | | | | |
| | 1058-11001 | 411100 | 1,482,542.30 | - | (15,630.60) | 1,466,911.70 | 1,466,911.70 | 1,474,884.07 |
| | 1058-11001 | 411200 | 299,945.30 | - | - | 299,945.30 | 299,945.30 | 299,945.30 |
| | 1058-11001 | 411300 | 123,638.30 | - | - | 123,638.30 | 123,638.30 | 123,638.30 |
| 1116 | Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում | | | | | | | |
| | 1116-11001 | 426600 | 319,635.20 | 50,308.80 | - | 369,944.00 | 367,087.98 | 431,493.16 |
| | 1116-11001 | 463700 | 1,128,794.10 | (26,963.00) | - | 1,101,831.10 | 1,090,631.09 | 1,087,582.62 |
| 1190 | Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի շրջանակներում ՀՀ տարբեր մարզերում զբոսաշրջության հետ կապված ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված միջոցառումներ | | | | | | | |
| | 1190-12001 | 511200 | 6,837,927.40 | | | 3,024,438.70 | 2,723,708.24 | 2,723,708.24 |
| | 1190-12001 | 512200 | 50,000.00 | | | - | - | - |
| | 1190-12001 | 513400 | 328,169.20 | | | 214,275.80 | 187,235.24 | 187,235.24 |
| 1224 | Կորոնավիրուսով (COVID-19) պայմանավորված մեկուսացված անձանց կեցության ապահովում | | | | | | | |
| | 1224-11001 | 423900 | - | 1,449,270.50 | (317,808.50) | 1,131,462.00 | 1,130,712.42 | 1,130,712.42 |
| | 1224-12001 | 452200 | 3,300,000.00 | 2,984,766.20 | 267,983.50 | 6,552,749.70 | 6,552,595.01 | 6,991,973.02 |

2021 թվականի դեբիտորական և կրեդիտորական պարտքերի աճի և նվազման ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ստորև աղյուսակում.

**Աղյուսակ 2,հազ.դրամ**

| Ծրագիր | Հոդված | Դեբիտորական պարտք | | | | Կրեդիտորական պարտք | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Ընդամենը տարեսկիզբ | ն/թ բյուջեից | Ընդամենը տարեվերջ | ն/թ բյուջեից | Ընդամենը տարեսկիզբ | ն/թ բյուջեից | Ընդամենը տարեվերջ |
| 1022 | Գյուղատնտեսության խթանման ծրագիր | | | | | | | |
| 1022-12001 | 452200 | | - | - | - | - | - | 840,313.84 |
| 1022-12004 | 452200 | - | - | - | - | - | - | 360,442.44 |
| 1058 | Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ | | | | | | | |
| 1058-11001 | 411100 | 9,485.32 | 9,485.32 | 1,512.95 | 1,512.95 | - | - | - |
| 1116 | Անասնաբուժական ծառայություններ | | | | | | | |
| 1116-11001 | 426600* | 103,118.02 | 103,118.02 | 38,712.84 | 38,712.84 | - | - | - |
| 1116-11001 | 463700 | 673.34 | 673.34 | 103,440.99 | 103,440.99 | - | - | 100,392.52 |
| 1224 | Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման ծրագիր | | | | | | | |
| 1224-11001 | 423900 | - | - | 4,035.20 | 4,035.20 | - | - | - |
| 1224-12001 | 452200 | - | - | - | - | - | - | 439,378.01 |

***Ստորև հաշվեքննությամբ արձանագրված հիմնական փաստերն են.***

***1022-12004 Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում միջոցառման*** գծով առկա է անհամապատասխանություն վարկառուների կողմից վարկերի ստացման համար ֆինանսական կազմակերպություններին ներկայացված ֆերմերների հետ կնքված պայմանագրերի ցանկի և կնքված պայմանագրերով փաստացի մթերված քանակների միջև, ինչպես նաև ֆերմերներին պատկանող անասնագլխաքանակների և հողերի վերաբերյալ ներկայացված տեղեկատվության տարբերությունների մասով: Առկա անհամապատասխանությունը հանգեցրել է խեղաթյուրման՝ ***717,959.18 հազ.դրամ տոկոսագումարների չափով***: Ինչպես նաև առկա է անհամապատասխանություն ***միջոցառման մոնիթորինգի իրականացման հետ:***

***1022-12001 Գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ոլորտում*** առկա է հսկողական գործընթացի թերացում կապված ՖԿ-ների կողմից իրականացված վարկերի նպատակայնության մոնիթորինգի միջոցով հայտնաբերված խախտումների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման հետ, ինչպես նաև ՖԿ-ների կողմից վարկառուներին տրամադրված վարկերի օգտագործման ուղղությունների հետ՝ վարկի ձևակերպման ժամանակ վարկի օգտագործման ընտրված ոլորտը հետագայում որոշ դեպքերում չի համապատասխանում փաստացի կատարված աշխատանքների ուղղություններին: Նախարարության կողմից վարկերի նպատակային օգտագործման վերաբերյալ հսկողական գործընթացները արդյունավետ չեն և ամբողջությամբ չեն արտացոլում վարկերի օգտագործման ուղղության իրական պատկերը:

Առկա են ռիսկեր կապված վարկի սուբսիդավորման ժամանակահատվածում վարկառուների կողմից գյուղատնտեսության գործունեությունը դադարեցնելու և վարկային միջոցներով կառուցված կամ ձեռքբերված գույքի օտարման հետ:

***1116-11001 Գյուղատնտեսական կենդանիների պատվաստման ոլորտում*** առկա են անհամապատասխանություններ Դաբաղ և Ծաղիկ պատվաստանյութերի ձեռքբերման համար գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի մասով կապված պատվաստանյութերի ձեռքբերման գնի հետ: 2019-2021թթ. ընթացքում, Նախարարության կողմից Դաբաղ և Ծաղիկ պատվաստանյութերի ձեռքբերման վերլուծությունից պարզվել է, որ նշված տարիներին պատվաստանյութերը գնվել են մեկ անձից: Մասնավորապես նշված ժամանակահատվածում հրատապության հիմքով մեկ անձից ձեռքբերումների

պատճառ են հանդիսացել մասնակիցների կողմից ներկայացված նախահաշվային գնից բարձր գնային առաջարկները, որոնք, ըստ էության, ներառել են պատվաստանյութի արժեքից բացի նաև ԱԱՀ-ի գումարը, որը չի նախատեսել և հաշվի չի առել Նախարարությունը: Հետևաբար, չկայացած մրցույթները և հետագայում համապատասխան որոշումների կայացումը հանգեցրել է պատվաստանյութերի ձեռքբերման ժամկետների երկարաձգման և մեկ անձից գնման հրատապության՝ կապված անասնահամաճարակային իրավիճակի կայունության ապահովման հետ: Կազմակերպված մրցույթներին հիմնականում մասնակցել են այն կազմակերպությունները, որոնց հետ կնքվել է մեկ անձից գնման պայմանագրեր: Միջոցառման երկրորդ բաղադրիչի՝ Հակահամաճարակային միջոցառումների իրականացման մասով առկա են անհամապատասխանություններ կապված անասնաբույժների և համաճարակաբանների հետ կնքված պայմանագրերի հետ, որոնք կնքվել են շրջանցելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջները, ինչպես նաև պայմանագրով նախատեսված հսկողական մեխանիզմները /մոնիթորինգ, ամփոփ հաշվետվություն/ չեն կատարվել: Նմուշառումներ կատարող և լաբորատոր փորձաքննություններ իրականացնող կազմակերպությունների կողմից արդյունքային ցուցանիշների վերաբերյալ ներկայացված հաշվետվությունների մասով առկա է խեղաթյուրում **1,248.81 հազ.դրամ գումարի չափով:**

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվել են Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում միջոցառման շրջանակներում Նախարարության կողմից 2021 թվականի արդյունքային /կատարողական/ ցուցանիշների վերաբերյալ ներկայացված հաշվետվությունը: 2021 թվականի ընթացքում Նախարարությունը կրճատելով Դաբաղ պատվաստանյութի քանակը, վեց և ինն ամիսների համար ներկայացված հաշվետվություններում պլանային փոփոխություններ չի կատարել, ավելին՝ ինն ամիսների հաշվետվությունից պարզվում է, որ նախատեսված պլանային ցուցանիշներից ավելի միջոցառում է իրականացվել: Պլանային ցուցանիշը փոփոխված ներկայացվել է տարեկան հաշվետվությունում: Պարզվել է, որ փաստացի իրականացված միջոցառումների քանակը գերազանցում է տարեկան ճշտված պլանային ցուցանիշին: Այսպիսով, Նախարարությունը Դաբաղ պատվաստանյութի ձեռքբերման քանակը կրճատելով արդյունքում իրականացրել է ավելի միջոցառում:

***1224-11001 Կորոնավիրուսով (COVID-19) պայմանավորված մեկուսացված անձանց կեցության ապահովման միջոցառման ոլորտում*** առկա է խեղաթյուրում

**1,145.78 հազ.դրամ գումարի չափով** կապված բժշկական հաստատությունների կողմից տրամադրված տեղեկատվության և Նախարարության կողմից դուրս գրված հաշիվ-ապրանքագրերի հետ:

***1224-12001 Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում ոլորտում*** առկա է անհամապատասխանություն և հսկողական գործընթացի թերացում կապված ծրագրով նախատեսված մոնիթորինգի իրականացման մասով:

***1058-11001 Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակման, ծրագրերի համակարգման և մոնիթորինգի ոլորտում*** առկա է խեղաթյուրում 4111 տնտեսագիտական դասակարգման հոդվածով աշխատակիցներին վճարված պարգևատրումների մասով Նախարարության կողմից ներկայացված հաշվետվությունում 336,696.49 հազ.դրամ գումարի չափով, ինչպես նաև հսկողության գործընթացի թերացում կապված թափուր հաստիքների հետ:

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում 2021 թվականի ընթացքում իրականացվել է պետական բյուջեի երեք, վեց, ինն և տարեկան կատարման հաշվեքննություններ: 2021 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննության շրջանակում իրականացվել է ստուգում ԳԾԿ-ում: Ուսումնասիրության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունները և խեղաթյուրումները ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն:

2021 թվականի ինն ամիսների հաշվեքննության արդյունքները Դաբաղ և Ծաղիկ պատվաստանյութերի ձեռքբերման մասով ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն:

Առ 28.04.2022թ. դրությամբ ՀՀ գլխավոր դատախազությունից տեղեկատվություն չի ստացվել գործերի ընթացքի վերաբերյալ:

Գեղամ Հովեյան
ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ
5 Մայիսի 2022 թվական
ՀՀ հաշվեքննիչ պալատ, Բաղրամյան փող. 19, ք. Երևան,
Հայաստանի Հանրապետություն

# II. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

2021 թվականի պետական բյուջեի կատարման հաշվեքննության շրջանակում իրականացվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության / այսուհետ՝ Նախարարություն/ տարեկան բյուջեի կատարողականի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություններ: Ստացվել է բավարար տեղեկատվություն հաշվեքննություն իրականացնելու համար:

Հաշվեքննությամբ հայտնաբերվել են էական անհամապատասխանություններ, որոնք ներկայացված են սույն ընթացիկ եզրակացության 1-ից 7-րդ կետերում, որոնք համատարած չեն, սակայն միասին վերցված էական են ՀՀ էկոնոմիկայի նախարարության 2021 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման վերաբերյալ հաշվետվության համար:

Հաշվեքննությամբ հայտնաբերվել են էական խեղաթյուրումներ, որոնք ներկայացված են սույն ընթացիկ եզրակացության 8-ից 11-րդ կետում, որը համատարած չեն, սակայն էական է ՀՀ էկոնոմիկայի նախարարության 2021 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման վերաբերյալ հաշվետվության համար:

# III. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

2021 թվականի

Աղյուսակ 3, հազ.դրամ

| Հ/Հ | | Ծրագիր | Տարեկան պլան | Տարեկան ճշտված պլան | Դրամարկղային ծախս | Փաստացի ծախս |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 1015 | Սոցիալական փաթեթների ապահովում | - | 36,864.00 | 26,901.00 | 26,901.00 |
| 2 | 1022 | Գյուղատնտեսության խթանման ծրագիր | 6,625,802.60 | 13,567,228.70 | 13,549,451.29 | 14,747,733.76 |
| 3 | 1026 | Սննդամթերքի լաբորատոր փորձաքննություններ | 190,842.90 | 165,842.90 | 165,842.50 | 165,842.50 |
| 4 | 1058 | Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ | 2,285,001.90 | 2,333,164.17 | 2,243,770.81 | 2,232,731.65 |
| 5 | 1059 | Բուսաբուծության խթանում և բույսերի պաշտպանություն | 412,092.30 | 187,063.50 | 186,864.63 | 196,118.03 |
| 6 | 1067 | Ստանդարտների մշակում և հավատարմագրման համակարգի զարգացում | 30,803.40 | 28,023.40 | 28,023.40 | 28,023.40 |
| 7 | 1086 | Գյուղական ենթակառուցվածքների վերականգնում և զարգացում | 3,930,456.60 | 2,980,463.70 | 2,441,622.18 | 2,477,238.09 |
| 8 | 1104 | Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրությանը | 183,120.00 | 105,000.00 | 79,343.55 | - |
| 9 | 1116 | Անասնաբուժական ծառայություններ | 2,027,594.70 | 1,858,874.10 | 1,821,301.78 | 1,882,658.49 |
| 10 | 1134 | Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցություն | 1,727,760.30 | 1,227,403.00 | 887,543.16 | 958,733.16 |
| 11 | 1162 | Գիտական և գիտատեխնիկական հետազոտությունների ծրագիր | 210,156.20 | 210,156.20 | 208,331.03 | 207,575.93 |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **12** | 1165 | Ներդրումների և արտահանման խթանման ծրագիր | 1,395,020.00 | 1,060,047.50 | 991,498.43 | 977,350.23 |
| **13** | 1187 | Գյուղատնտեսության արդիականացման ծրագիր | 2,603,248.30 | 4,292,448.30 | 4,266,598.58 | 4,734,952.56 |
| **14** | 1190 | Ջրասաշրջության զարգացման ծրագիր | 7,607,994.90 | 3,646,243.40 | 3,214,478.69 | 3,221,072.70 |
| **15** | 1224 | Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման ծրագիր | 3,300,000.00 | 9,237,682.40 | 8,985,665.01 | 9,498,506.69 |
| **16** | 1230 | Ռազմական դրության պայմաններում քաղաքացիների կյանքի ու անվտանգության ապահովման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման ծրագիր | - | 1,284,113.50 | 938,814.64 | 942,408.64 |
| | | **ԸՆԴԱՄԵՆԸ** | **32,529,894.10** | **42,220,618.77** | **40,036,050.68** | **42,297,846.83** |

# IV. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

## 1. Գյուղատնտեսության խթանման 1022 Ծրագրի՝ Գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում 12004՝ միջոցառման շրջանակներում արձանագրված անհամապատասխանության վերաբերյալ

***Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 28.02.2019թ. թիվ 201-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 23-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների հետ՝ վարկառուների կողմից ներկայացված վարկերի ստացման համար հիմք հանդիսացող տեղեկատվության /ձև 1/ և ֆերմերներին պատկանող փաստացի անասնագլխաքանակի և հողերի քանակների միջև:***

ՀՀ կառավարության 28.02.2019թ. թիվ 201-Լ որոշմամբ հաստատվել է գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը: Նշված ծրագրի նպատակն է հանրապետության տարածքում գործող գյուղատնտեսական հումք վերամշակող արդյունաբերության ոլորտում զբաղված իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին տրամադրվող նպատակային վարկերի տոկոսադրույքի սուբսիդավորման միջոցով վարկավորման մատչելիության մակարդակի բարձրացումը: Սուբսիդավորման ենթակա վարկերը պետք է նպատակաուղղվեն բացառապես մթերվող գյուղատնտեսական հումքի արժեքի վճարմանը: Վարկառու կազմակերպությունները պայմանագիր պետք է կնքեն այն գյուղացիական տնտեսությունների հետ, որոնք ունեն սեփականության իրավունքով պատկանող կամ վարձակալական հիմունքներով օգտագործվող հողատարածք (հողատարածքներ), կամ տնտեսությանը պատկանող գյուղատնտեսական կենդանիների գլխաքանակ ունեցող ֆերմերների հետ:

Ծրագրի իրականացման համար 2021 թվականին ՀՀ պետական բյուջեի տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 2,684,594.70 հազ. դրամ: 2021 թվականի հաշվետու ժամանակաշրջանի դրամարկղային ծախսը կազմել է՝ 2,684,594.70 հազ. դրամ, փաստացին՝ 3,045,036.93 հազ. դրամ:

Նշված գումարը վճարվել է ընթացիկ և նախորդ տարիներին ծրագրի ընթացքում տրամադրված վարկերի տոկոսագումարների վճարման համար: Նշված ծրագրից օգտվել են թվով 138 շահառու:

Արդյունքում պարզ է դառնում, որ Վարկառու կազմակերպությունների կողմից վարկերի ստացման համար հիմք հանդիսացող N 1 ձևերում արտացոլված տեղեկատվության համապատասխանությունը ստուգելու նպատակով սուբսիդավորման ծրագրի վարկային փաթեթներից 2021 թվականի տարեկան հաշվեքննության ընթացքում փաստացի սուբսիդավորված վարկառուների ցանկից կազմվել է վիճակագրական ընտրանք: Ընտրանքով ներառված վարկառու կազմակերպություններից կաթ մթերելու համար ընտրվել է Շիրակի մարզում գործող վարկառուները, իսկ խաղողի մթերման համար Արարատի մարզում գործող վարկառուները: Ըստ իրականացված վիճակագրական ընտրանքի ուսումնասիրություն պետք է իրականացվեր թվով 5 շահառուների նկատմամբ, սակայն իրականացվել է թվով 9 ուսումնասիրություն:

**Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվել են կաթի մթերմամբ զբաղվող «Սպայկա» ՍՊԸ-ի, «Միլկաթ» ՍՊԸ-ի, «Ամասիայի գլխավորող պանրագործարան» և «Աշոցքի պանրի գործարան» ՍՊԸ-ների 2020թ. և 2021թ. ընթացքում վարկի տրամադրման համար հիմք հանդիսացող՝ վարկառուների կողմից ներկայացված տեղեկատվությունը /ձև 1/ և այն համադրվել է ֆերմերների համայնքների կողմից տրամադրված տեղեկության հետ:**

**Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրելով խաղողի մթերմամբ զբաղվող «Գետափի գինու կոնյակի գործարան» ՍՊԸ-ի 2020թ, «Արտաշատ-վինկոն» ՓԲԸ-ի 2020 թվականի, «Արարատի գինու կոնյակի գործարան» ՓԲԸ-ի 2019-2021թթ, «Վեդի-Ալկո» ՓԲԸ-ի 2021 թվականի և «Ոստան գինու գործարան» ՓԲԸ-ի 2020-2021 թվականների ընթացքում վարկի տրամադրման համար հիմք հանդիսացող վարկառուների կողմից ներկայացված տեղեկատվությունը /ձև 1/՝ այն համադրվել է ֆերմերների համայնքների կողմից տրամադրված տեղեկության հետ:**

## «Սպայկա» ՍՊԸ

«Սպայկա» ՍՊԸ-ի և «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի միջև 16.11.2020թ. կնքվել է վարկ տրամադրելու մասին լրացուցիչ համաձայնագիր 100,000.00 հազ. դրամի գումար երկու փուլով տրամադրելու վերաբերյալ, երկու տարի ժամկետով:

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրելով վարկի տրամադրման համար հիմք հանդիսացող վարկառուի կողմից ներկայացված տեղեկատվությունը /ձև 1/՝ այն համադրվել է ֆերմերների համայնքների ղեկավարների կողմից տրամադրված

«Բնակչության տնտեսությունների գյուղատնտեսական կենդանիների հաշվառման ցուցակներում» արտացոլված տեղեկության հիման վրա տրամադրված տեղեկանքների հետ, ինչպես նաև ԳԾԿ-ի «Անասնաբուժական հակահամաճարակային միջոցառումների գրանցամատյանի» տվյալների հիման վրա տվյալ տարածաշրջանի անասնաբույժի կողմից տրված տեղեկանքների հետ: ***Արդյունքում, պարզվել է, որ ներկայացված փեղեկափվության մեջ առկա են ներքոնշյալ անհամապափասխանությունները, մասնավորապես՝***

Աղյուսակ 4, հազ.դրամ

| Հ/Հ | Անուն Ազգանուն | Ըստ ձև 1-ի ներկայացված տեղեկատվություն | | Ըստ համայնքի ղեկավարի և ԳԾԿ-ի տրամադրված տեղեկանքի | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|
| | | Կովերի գլխաքանակ | Մթերված կաթի քանակ /լ/ | Կովերի գլխաքանակ | |
| 1 | Ծ.Վ. | 1 | 85453 | 3 | Ծանոթություն 1 |
| 2 | Ա. Ի. | 50 | 29763 | 0 | |
| 3 | Ս. Ս. | 29 | 20966 | 0 | |
| 4 | Ն. Վ. | 40 | 22881 | 0 | |
| 5 | Բ. Ա. | 70 | 92528 | 0 | |
| 6 | Շ. Ս. | 20 | 6604 | 20 | Ծանոթություն 2 |
| 7 | Շ. Կ. | 20 | 14467 | 0 | |

**Ծանոթություն 1.**

Նշված ֆերմերի կողմից, ըստ ներկայացված տեղեկատվության, պլանավորվել է 01.11.2020թ-ից 5 ամիս ժամանակահատվածում մթերել 85,453 լիտր կաթ, ինչը 3 գլխաքանակ կենդանիով, համեմատելով այլ ֆերմերների կենդանիների քանակների և մթերվող կաթի ծավալների հետ հնարավոր չէր իրականացնել և հանդիսանում է անարժանահավատ տեղեկատվություն:

**Ծանոթություն 2.**

Համաձայն ընկերության կողմից ներկայացված ձև 1-ի տեղեկատվության, ընկերությունը, որպես առանձին ֆերմեր կաթի մթերման պայմանագրեր է կնքել Ս. և Կ. Շ.-յանների հետ: Համաձայն Ստեփանավանի համայնքապետարանի կողմից 18.06.2021թ. տրամադրված տեղեկանքի Ս. Շ. և Կ. Շ. հանդիսանում են մայր և որդի: Սակայն «Բնակչության տնտեսությունների գյուղատնտեսական կենդանիների հաշվառման ցուցակներում» և ԳԾԿ ՊՈԱԿ-ի «Անասնաբուժական հակահամաճարակային միջոցառումների գրանցամատյանի» տվյալների Կ. Շ.ի անվամբ խոշոր եղջերավոր կենդանիներ հաշվառված չեն:

**Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 28.02.2019թ. թիվ 201-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 23-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների և վարկառուի կողմից ներկայացված վարկի ստացման համար հիմք հանդիսացող**

**տեղեկատվության /ձև 1/ և ֆերմերներին պատկանող փաստացի կենդանիների գլխաքանակների միջև, *որի արդյունքում ֆինանսական կազմակերպությանը ներկայացվել է նախատեսված մթերման համար՝ 180,605 լիտր ավելին՝ 34,844.44 հազ. դրամ գումարի չափով:***

«Սպայկա» ՍՊԸ-ի **կողմից 2020-2021թթ. ստացված վարկի համար ՀՀ պետական բյուջեից 2021թ. ընթացքում սուբսիդավորվել է 6,055.60 հազ.դրամ տոկոսագումար:**

**Տարբերության գումարը հաշվարկվել է ըստ ձև 1-ի ներկայացված տեղեկատվության և համայնքի ղեկավարի ու ԳԾԿ-ի տրամադրված տեղեկանքի անասնագլխաքանակի այն դեպքերի նկատմամբ, որոնց վերաբերյալ համայնքի ղեկավարի ու ԳԾԿ-ի տրամադրված տեղեկանքների ֆերմերները կենդանիներ չեն ունեցել:**

## «Միլլկաթ» ՍՊԸ

«Միլլկաթ» ՍՊԸ-ի և «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի միջև 24.05.2021թ. կնքվել է վարկային թիվ IF21/00027 պայմանագիրը գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով 40,000.00 հազ. դրամ գումարի չափով:

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրելով վարկի տրամադրման համար հիմք հանդիսացող վարկառուի կողմից ներկայացված տեղեկատվությունը /ձև 1/՝ այն համադրվել է ֆերմերների համայնքների ղեկավարների կողմից տրամադրված «Բնակչության տնտեսությունների գյուղատնտեսական կենդանիների հաշվառման ցուցակներում» արտացոլված տեղեկության հիման վրա տրամադրված տեղեկանքների հետ, ինչպես նաև ԳԾԿ-ի «Անասնաբուժական հակահամաճարակային միջոցառումների գրանցամատյանի» տվյալների հիման վրա տվյալ տարածաշրջանի անասնաբույժի կողմից տրված տեղեկանքների հետ: ***Արդյունքում, պարզվել է, որ ներկայացված տեղեկատվության մեջ առկա են ներքոնշյալ անհամապատասխանությունները, մասնավորապես՝***

**Աղյուսակ 5**

| Հ/Հ | Մթերք վաճառող | ըստ ձև 1-ի ներկայացված տեղեկատվության | | ըստ համայնքի ղեկավարի և ԳԾԿ-ի տրամադրված տեղեկանքի | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|
| | | կովերի գլխաքանակ /գլուխ/ | մթերված կաթի քանակ /լիտր/ | կովերի գլխաքանակ /գլուխ/ | Ծանոթություն |
| 1 | Տ. Ո. | 70 | 30000 | 8 | Ծանոթություն 1 |
| 2 | Ռ. Հ. | 80 | 62000 | 0 | Ծանոթություն 2 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3 | Ա. Հ. | 90 | 50000 | 0 | Ծանոթություն 3 |
| 4 | Դ. Հ. | 90 | 50000 | 68 | Ծանոթություն 3 |
| 5 | Ռ. Ու. | 30 | 20000 | 27 | Ծանոթություն 4 |
| 6 | Գ. Ս. | 40 | 21000 | 49 | Ծանոթություն 4 |
| 7 | Մ. Ս. | 45 | 20000 | 27 | Ծանոթություն 5 |

Հաշվեքննողների ուսումնասիրությունների տվյալները հիմնված են նշված ֆերմերների համայնքների ղեկավարների կողմից տրամադրված «Բնակչության տնտեսությունների գյուղատնտեսական կենդանիների հաշվառման ցուցակներում» արտացոլված տեղեկության հիման վրա տրամադրված տեղեկանքների:

**Ծանոթություն 1.** Համաձայն Սևան համայնքի «Բնակչության տնտեսությունների գյուղատնտեսական կենդանիների հաշվառման ցուցակներում» առ 1-ը 01.01.2021թ. դրությամբ, ինչպես նաև «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի «Անասնաբուժական հակահամաճարակային միջոցառումների գրանցամատյանի» առ 01.01.2021թ, 01.07.2021թ. և 04.10.2021թ. դրությամբ Մ. Ո.ի անվամբ հաշվառված է 8 խոշոր եղջերավոր կենդանի: Մ. Ո.ը հանդիսանում է Տ. Ո.ի մայրը:

**Ծանոթություն 2.** Համաձայն Սևան համայնքի «Բնակչության տնտեսությունների գյուղատնտեսական կենդանիների հաշվառման ցուցակներում» առ 1-ը 01.01.2021թ. դրությամբ, ինչպես նաև «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի «Անասնաբուժական հակահամաճարակային միջոցառումների գրանցամատյանի» առ 01.01.2021թ, 01.07.2021թ. և 04.10.2021թ. դրությամբ Ռ. Հ.ի անվամբ խոշոր եղջերավոր կենդանիներ հաշվառված չեն:

**Ծանոթություն 3.** Համաձայն Հայրավանք համայնքի «Բնակչության տնտեսությունների գյուղատնտեսական կենդանիների հաշվառման ցուցակներում» առ 1-ը 01.01.2021թ. դրությամբ, ինչպես նաև «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի «Անասնաբուժական հակահամաճարակային միջոցառումների գրանցամատյանի» առ 01.01.2021թ, 01.07.2021թ. և 04.10.2021թ. դրությամբ Դ. Ա. Հ.ի անվամբ հաշվառված են 68 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ, իսկ Ա. Ա. Հ.ի անվամբ խոշոր եղջերավոր կենդանիներ հաշվառված չեն:

**Ծանոթություն 4.** Համաձայն Լճափ համայնքի «Բնակչության տնտեսությունների գյուղատնտեսական կենդանիների հաշվառման ցուցակներում» առ 1-ը 01.01.2021թ. դրությամբ, Ու. Ջ. Բ.ի անվամբ /հանդիսանում է Ու. Ռ.ի հայրը/ հաշվառված են 27 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ, իսկ Ս. Վ. Պ.ի /հանդիսանում է Գ. Ս.ի հայրը/ հաշվառված է 49 խոշոր եղջերավոր կենդանիներ:

**Ծանոթություն 5.** Համաձայն Ծովազարդ համայնքի «Բնակչության տնտեսությունների գյուղատնտեսական կենդանիների հաշվառման ցուցակներում» առ 1-ը 01.01.2021թ. դրությամբ, Ս. Մ.ի անվամբ հաշվառված են 30 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ:

**Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 28.02.2019թ. թիվ 201-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 23-րդ կետի 2-րդ մասի պահանջների և վարկառուի կողմից ներկայացված վարկի ստացման համար հիմք հանդիսացող տեղեկատվության /ձև 1/ և ֆերմերներին պատկանող փաստացի կենդանիների գլխաքանակների միջև, որի արդյունքում ֆինանսական կազմակերպությանը** ***ներկայացվել է նախատեսված մթերման համար*** **112,000լ ավելին՝ 17,000.00 հազ. դրամ գումարի չափով:**

**«Միլկաթ» ՍՊԸ-ի կողմից 2021թ. ստացված վարկի համար ՀՀ պետական բյուջեից 2021թ. ընթացքում սուբսիդավորվել է** ***2,373.97*** **հազ.դրամ տոկոսագումար:**

**Տարբերության գումարը հաշվարկվել է ըստ ձև 1-ի ներկայացված տեղեկատվության և համայնքի ղեկավարի ու ԳԾԿ-ի տրամադրված տեղեկանքի անասնագլխաքանակի այն դեպքերի նկատմամբ, որոնց վերաբերյալ համայնքի ղեկավարի ու ԳԾԿ-ի տրամադրված տեղեկանքների ֆերմերները կենդանիներ չեն ունեցել:**

## «Ամասիայի գլխավորող պանրագործարան» ՍՊԸ

«Ամասիայի գլխավորող պանրագործարան» ՍՊԸ-ի և «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի միջև 07.05.2020թ. և 26.08.2020թ կնքված վարկային պայմանագրերի համաձայն վարկառուին տրամադրվել է 170,000.00 հազ. դրամ, իսկ 12.04.2021թ.՝ 150,000.00 հազ. դրամ գումարի չափով:

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրելով վարկի տրամադրման համար հիմք հանդիսացող վարկառուի կողմից ներկայացված տեղեկատվությունը /ձև 1/՝ այն համադրվել է ֆերմերների համայնքների ղեկավարների կողմից տրամադրված «Բնակչության տնտեսությունների գյուղատնտեսական կենդանիների հաշվառման ցուցակներում» արտացոլված տեղեկության հիման վրա տրամադրված տեղեկանքների հետ, ինչպես նաև ԳԾԿ-ի «Անասնաբուժական հակահամաճարակային միջոցառումների գրանցամատյանի» տվյալների հիման վրա տվյալ տարածաշրջանի անասնաբույժի կողմից տրված տեղեկանքների հետ: ***Արդյունքում, պարզվել է, որ ներկայացված տեղեկատվության մեջ առկա են ներքոնշյալ անհամապատասխանությունները, մասնավորապես՝***

## 2020 թվականի վերաբերյալ

Աղյուսակ 6

| Հ/Հ | Մթերք վաճառող | ըստ ձև 1-ի ներկայացված տեղեկատվություն | | ըստ համայնքի ղեկավարի և ԳԾԿ-ի տրամադրված տեղեկանքի | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|
| | | կովերի գլխաքանակ | մթերված կաթի քանակ /լիտր/ | կովերի գլխաքանակ | |
| | Արևշատ | | | | |
| 1 | Վ. Բ. | 29 | 500000 | 5 | Ծանոթություն 1 |
| | Հնաբերդ | | | | |
| 2 | Մ. Ն. | 46 | 500000 | 13 | Ծանոթություն 2 |

**Ծանոթություն 1.** Համաձայն Շիրակի մարզի Արևշատ համայնքի «Բնակչության տնտեսությունների գյուղատնտեսական կենդանիների հաշվառման ցուցակներում» ըստ համայնքի ղեկավարի 23.11.2021թ. տրված տեղեկանքի համաձայն 01.01.2020թ. դրությամբ Վ. Բ.ի անվամբ հաշվառված է եղել 5 խոշոր եղջերավոր կենդանի:

**Ծանոթություն 2.** Համաձայն Արագածոտնի մարզի Հնաբերդ համայնքի «Բնակչության տնտեսությունների գյուղատնտեսական կենդանիների հաշվառման ցուցակների», ինչպես նաև «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի «Անասնաբուժական հակահամաճարակային միջոցառումների գրանցամատյանի» ըստ համայնքի ղեկավարի 25.11.2021թ. տրված տեղեկանքի համաձայն 01.01.2020թ. դրությամբ Մ. Ն.ի անվամբ հաշվառված է եղել 13 խոշոր եղջերավոր կենդանի /Մ. Ն.ը հանդիսանում է Մ. Ն.ի որդին/:

## 2021 թվականի վերաբերյալ

**Աղյուսակ 7**

| Հ/Հ | Մթերք վաճառող | ըստ ձև 1-ի ներկայացված տեղեկատվություն | | ըստ համայնքի ղեկավարի և ԳԾԿ-ի տրամադրված տեղեկանքի | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|
| | | կովերի գլխաքանակ | մթերված կաթի քանակ /լիտր/ | կովերի գլխաքանակ | |
| | Արևշատ | | | | |
| 1 | Վ. Բ. | 29 | 500000 | 9 | Ծանոթություն 1 |
| | Հնաբերդ | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2 | Մ. Ն. | 46 | 500000 | | 19 | Ծանոթություն 2 |

**Ծանոթություն 1.** Համաձայն Շիրակի մարզի Արևշատ համայնքի «Բնակչության տնտեսությունների գյուղատնտեսական կենդանիների հաշվառման ցուցակներում» առ 1-ը 01.01.2021թ. դրությամբ, ինչպես նաև «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի «Անասնաբուժական հակահամաճարակային միջոցառումների գրանցամատյանի», ըստ համայնքի ղեկավարի 11.10.2021թ. տրված տեղեկանքի համաձայն առ 01.07.2021թ. և 06.09.2021թ. դրությամբ Վ. Բ.ի անվամբ հաշվառված է 9 խոշոր եղջերավոր կենդանի:

**Ծանոթություն 2.** Համաձայն Արագածոտնի մարզի Հնաբերդ համայնքի «Բնակչության տնտեսությունների գյուղատնտեսական կենդանիների հաշվառման ցուցակներում» առ 1-ը 01.01.2021թ. դրությամբ, ինչպես նաև «Գյուղատնտեսական ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի «Անասնաբուժական հակահամաճարակային միջոցառումների գրանցամատյանի», ըստ համայնքի ղեկավարի 11.10.2021թ. առ 01.01.2021թ, 06.09.2021թ. և 04.10.2021թ. դրությամբ Մ. Ն.ի անվամբ հաշվառված է 19 խոշոր եղջերավոր կենդանիներ /Մ. Ն.ը հանդիսանում է Մ. Ն.ի որդին/:

Վերոնշյալ համեմատումները հիմնված են ձև 1-ում նշված համայնքների կողմից հաշվեքննությանը տրամադրված «Բնակչության տնտեսությունների գյուղատնտեսական կենդանիների հաշվառման ցուցակներ»-ում արտացոլված տեղեկատվության հիման վրա:

**Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 28.02.2019թ. թիվ 201-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 23-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների և վարկառուի կողմից ներկայացված վարկի ստացման համար հիմք հանդիսացող տեղեկատվության /ձև 1/ և ֆերմերներին պատկանող փաստացի կենդանիների գլխաքանակների միջև:**

**«Ամասիայի գլխավորող պանրագործարան» ՍՊԸ-ի կողմից 2020թ. և 2021թ. ստացված վարկերի *համար ՀՀ պետական բյուջեից 2021թ. ընթացքում սուբսիդավորվել է 15,786.69 հազ.դրամ տոկոսագումարներ:***

## «Աշոցքի պանրի գործարան» ՍՊԸ

«Աշոցքի պանրի գործարան» ՍՊԸ-ի և «Ինեկոբանկ» ՓԲԸ-ի միջև 26.05.2020թ. կնքված վարկային պայմանագրի համաձայն վարկառուին տրամադրվել է 100,000.00 հազ. դրամ, իսկ 09.06.2021թ. կնքված վարկային պայմանագրի համաձայն վարկառուին տրամադրվել է 100,000.00 հազ. դրամ:

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրելով վարկի տրամադրման համար հիմք հանդիսացող վարկառուի կողմից ներկայացված տեղեկատվությունը /ձև 1/՝ այն համադրվել է ֆերմերների համայնքների ղեկավարների կողմից տրամադրված «Բնակչության տնտեսությունների գյուղատնտեսական կենդանիների հաշվառման ցուցակներում» արտացոլված տեղեկության հիման վրա տրամադրված տեղեկանքների հետ, հարկ է նշել, ԳԾԿ-ի «Անասնաբուժական հակահամաճարակային միջոցառումների գրանցամատյանի» տվյալները հաշվեքննությանը չի տրամադրվել:

***Արդյունքում, պարզվել է, որ ներկայացված տեղեկատվության մեջ առկա են ներքոնշյալ անհամապատասխանությունները, մասնավորապես՝***

**2020 թվականի վերաբերյալ**

**Աղյուսակ 8**

| Հ/Հ | Ֆերմերի անուն ազգանուն | Ըստ ձև 1-ի ներկայացված տեղեկատվություն | | Ըստ համայնքի տեղեկանքի | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|
| | | Կովերի գլխաքանակ | Մթերված կաթի քանակ /լիտր/ | Կովերի գլխաքանակ | |
| **Փոքր Սեպասար համայնք** | | | | | |
| 1 | Վ. Մ. | 4 | 1605 | 0 | Համայնքի բնակիչ չէ և իր անունով ԽԵԿ հաշվառված չէ |
| 2 | Դ. Գ. | 6 | 491 | 0 | Համայնքի բնակիչ չէ և իր անունով ԽԵԿ հաշվառված չէ |
| **Ղազանչի համայնք** | | | | | |
| 3 | Ա. Մ. | 10 | 4137 | 0 | Համայնքի բնակիչ չէ և իր անունով ԽԵԿ հաշվառված չէ |
| **Ձյուգաղբյուր համայնք** | | | | | |
| 4 | Ա. Դ. | 12 | 6258 | 8 | +4 |
| **Մուսայելյան համայնք** | | | | | |
| 5 | Ք. Մ. | 18 | 25510 | 0 | Համայնքի բնակիչ չէ և իր անունով ԽԵԿ հաշվառված չէ |
| 6 | Ռ. Մ. | 7 | 3353 | 0 | Համայնքի բնակիչ չէ և իր անունով ԽԵԿ հաշվառված չէ |
| 7 | Վ. Շ. | 18 | 21134 | 0 | Համայնքի բնակիչ չէ և իր անունով ԽԵԿ հաշվառված չէ |
| 8 | Կ. Հ. | 6 | 2573 | 0 | Համայնքի բնակիչ չէ և իր անունով ԽԵԿ հաշվառված չէ |
| 9 | Հ. Ղ. | 5 | 1674 | 0 | Համայնքի բնակիչ չէ և իր անունով ԽԵԿ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | հաշվառված չէ |
| 10 | Ք. Մ. | 4 | 10000 | 0 | Համայնքի բնակիչ չէ և իր անունով ԽեԿ հաշվառված չէ |
| | Օձուն համայնք | | | | |
| 11 | Մ. Ղ. | 24 | 26349 | 0 | |

## 2021 թվականի վերաբերյալ

Աղյուսակ 9

| Հ/Հ | Ֆերմերի անուն ազգանուն | Ըստ ձև 1-ի ներկայացված տեղեկատվություն | | Ըստ համայնքի տրամադրված տեղեկանքի | |
|---|---|---|---|---|---|
| | | Կովերի գլխաքանակ | Մթերված կաթի քանակ /լիտր/ | Կովերի գլխաքանակ | |
| | Մեծ Սեպասար համայնք | | | | |
| 1 | Ա. Ա. | 5 | 3610 | 0 | Համայնքի բնակիչ չէ և իր անունով ԽեԿ հաշվառված չէ |
| 2 | Խ. Պ. | 5 | 2920 | 0 | Համայնքի բնակիչ չէ և իր անունով ԽեԿ հաշվառված չէ |
| | Փոքր Սեպասար համայնք | | | | |
| 3 | Ա. Ա. | 18 | 15410 | 0 | Համայնքի բնակիչ չէ և իր անունով ԽեԿ հաշվառված չէ |
| 4 | Ա. Գ. | 4 | 2700 | 0 | Համայնքի բնակիչ չէ և իր անունով ԽեԿ հաշվառված չէ |
| 5 | Ա.Վ. | 4 | 2430 | 0 | Համայնքի բնակիչ չէ և իր անունով ԽեԿ հաշվառված չէ |
| 6 | Մ. Գ. | 4 | 2700 | 0 | Համայնքի բնակիչ չէ և իր անունով ԽեԿ հաշվառված չէ |
| | Ղազանչի համայնք | | | | |
| 7 | Գ. Գ. | 5 | 2920 | 0 | Համայնքի բնակիչ չէ և իր անունով ԽեԿ հաշվառված չէ |
| | Զույգաղբյուր համայնք | | | | |
| 8 | Ա. Մ. | 6 | 2720 | 0 | |
| | Սալուտ համայնք | | | | |
| 9 | Մ. Խ. | 40 | 25500 | 0 | |
| | Վարդաղբյուր համայնք | | | | |
| 10 | Ա. Վ. | 4 | 2730 | 0 | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Օձուն համայնք | | | | |
| 11 | Մ. Ղ. | 24 | 15230 | 0 | |
| 12 | Մ. Ղ. | 20 | 12640 | 11 | |
| 13 | Հ. Հ. | 9 | 11780 | 0 | |

**Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 28.02.2019թ. թիվ 201-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 23-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների և վարկառուի կողմից 2020թ. ներկայացված վարկի ստացման համար հիմք հանդիսացող տեղեկատվության /ձև 1/ և ֆերմերներին պատկանող փաստացի կենդանիների գլխաքանակների միջև, որի արդյունքում ֆինանսական կազմակերպությանը *ներկայացվել է նախատեսված մթերման համար* 96819լ ավելին, իսկ 2021թ.՝ 90650լ ավելին:**

**«Աշոցքի պանրի գործարան» ՍՊԸ-ի կողմից 2020թ. և 2021թ. ստացված վարկի համար ՀՀ պետական բյուջեից 2021թ. ընթացքում սուբսիդավորվել է 6,843.12 հազ.դրամ տոկոսագումար:**

**Տարբերության գումարը հաշվարկվել է ըստ ձև 1-ի ներկայացված տեղեկատվության և համայնքի ղեկավարի տեղեկանքի անասնագլխաքանակի այն դեպքերի նկատմամբ, որոնց վերաբերյալ համայնքի ղեկավարի տեղեկանքի ֆերմերները կենդանիներ չեն ունեցել:**

## «Գետափի գինու կոնյակի գործարան» ՍՊԸ

«Գետափի գինու կոնյակի գործարան» ՍՊԸ-ի և «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ի միջև 06.10.2020թ. կնքված վարկային պայմանագրի համաձայն վարկառուին տրամադրվել է 200,000.00 հազ. դրամ:

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրելով վարկի տրամադրման համար հիմք հանդիսացող վարկառուի կողմից ներկայացված տեղեկատվությունը /ձև 1/՝ այն համադրվել է ֆերմերների համայնքների հողի հարկի բազայում առկա տեղեկատվության հիման վրա տրամադրված տեղեկանքների հետ: ***Արդյունքում, պարզվել է, որ ներկայացված տեղեկատվության մեջ առկա են ներքոնշյալ անհամապատասխանությունները, մասնավորապես՝***

Աղյուսակ 10

| Անուն, Ազգանուն | Մշակվող հողատարածքը ըստ ձև 1-ի /հա/ | Խաղողի մշակվող հողատարածքը ըստ համայնքապետարանի տվյալների /հա/ | Տարբերություն /հա/ | Մթերված քանակ /տ/ |
|---|---|---|---|---|

| | Մարզ | Համայնք | Տարածք /հա/ | Սեփականություն | Խաղողի այգի | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| «Գոլդեն Գրեյպ Արմաս» ՍՊԸ | Արագածոտն | Կոշ | 110 | 85.09 | 57.66 | -52,34 | 470.45 |
| Ա.Ա. | Արագածոտն | Կոշ | 27 | 41.73 | 15.18 | -5.12 | 46675 |
| | | Սասունիկ | | 12 | 6.7 | | |

Վերոնշյալ համեմատումները հիմնված են ձև 1-ում նշված հողամասի չափերի և համայնքների կողմից հաշվեքննությանը տրամադրված ֆերմերներին սեփականության և օգտագործման իրավունքով պատկանող հողամասերի չափերի հետ:

***Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 28.02.2019թ. թիվ 201-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 23-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների և վարկառուի կողմից ներկայացված վարկի ստացման համար հիմք հանդիսացող տեղեկատվության /ձև 1/ և ֆերմերներին պատկանող փաստացի հողերի չափերի միջև:***

**«Գետափի գինու կոնյակի գործարան» ՍՊԸ-ի կողմից ստացված վարկի համար *ՀՀ պետական բյուջեից 2021թ. ընթացքում* սուբսիդավորվել է 23,578.51 հազ.դրամ *տոկոսագումար:***

## «Արտաշատ - վինկոն» ՓԲԸ-ի վերաբերյալ

«Արտաշատ-վինկոն» ՓԲԸ-ի և «Արմսվիսբանկ» ՓԲԸ-ի միջև 02.10.2020թ. և 23.10.2020թ. կնքված վարկային պայմանագրերի համաձայն վարկառուին տրամադրվել է ընդհանուր 1,000,000.00 հազ. դրամ:

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրելով վարկի տրամադրման համար հիմք հանդիսացող վարկառուի կողմից ներկայացված տեղեկատվությունը /ձև 1/՝ այն համադրվել է ֆերմերների համայնքների հողի հարկի բազայում առկա տեղեկատվության հիման վրա տրամադրված տեղեկանքների հետ: ***Արդյունքում, պարզվել է, որ ներկայացված տեղեկատվության մեջ առկա են որոշակի անհամապատասխանություններ, մասնավորապես՝ 378 ֆերմերների հողատարածքներից 140-ում առկա է անհամապատասխանություն, որից 77-ը, ըստ*** **համայնքի ղեկավարների տրամադրված տեղեկատվության ֆերմերները խաղողի այգիներ չեն ունեցել /ներկայացված է Հավելված 1-ով/:**

***Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 28.02.2019թ. թիվ 201-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 23-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների և վարկառուի*** **կողմից ներկայացված վարկի ստացման համար հիմք հանդիսացող**

տեղեկատվության /ձև 1/ և ֆերմերներին պատկանող խաղողի փաստացի այգիների չափերի միջև, որի արդյունքում ֆինանսական կազմակերպությանը *ներկայացվել է նախատեսված մթերման համար* 702810 կգ ավելին մթերվող քանակ:

«Արտաշատ-վինկոն» ՓԲԸ-ի կողմից ստացված վարկերի համար ՀՀ պետական բյուջեից 2021թ. ընթացքում սուբսիդավորվել է 121,650.19 հազ.դրամ տոկոսագումար:

## «Արարատի գինու գործարան» ՓԲԸ

**«Արարատի գինու կոնյակի գործարան» ՓԲԸ-ի** և «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի միջև կնքված վարկային պայմանագրերի համաձայն վարկառուին տրամադրվել է 2019թ. 901,600.00 հազ. դրամի վարկ, 2020թ.՝ 1,936,000.00 հազ.դրամի վարկ և 2021թ.՝ 901,378.00 հազ. դրամի վարկ:

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրելով վարկի տրամադրման համար հիմք հանդիսացող վարկառուի կողմից ներկայացված տեղեկատվությունը /ձև 1/՝ այն համադրվել է ֆերմերների համայնքների հողի հարկի բազայում առկա տեղեկատվության հիման վրա տրամադրված տեղեկանքների հետ: ***Արդյունքում, պարզվել է, որ ներկայացված տեղեկատվության մեջ առկա են որոշակի անհամապատասխանությունները, մասնավորապես՝***

***2019թ.- 488 ֆերմերների հողատարածքներից 214-ում առկա է անհամապատասխանություն, որից 80-ը, ըստ*** **համայնքի ղեկավարների տրամադրված տեղեկատվության ֆերմերները խաղողի այգիներ չեն ունեցել /ներկայացված է Հավելված 2-ով/:**

**Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 28.02.2019թ. թիվ 201-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 23-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների և վարկառուի կողմից ներկայացված վարկի ստացման համար հիմք հանդիսացող տեղեկատվության /ձև 1/ և ֆերմերներին պատկանող խաղողի փաստացի այգիների չափերի միջև, որի արդյունքում ֆինանսական կազմակերպությանը *ներկայացվել է նախատեսված մթերման համար* 1320360 կգ ավելին մթերվող քանակ՝** 210,752.80 **հազ. դրամի չափով:**

**«Արարատի գինու կոնյակի գործարան» ՓԲԸ-ի կողմից ստացված վարկերի համար ՀՀ պետական բյուջեից 2021թ. ընթացքում սուբսիդավորվել է 4,182.93 հազ.դրամ տոկոսագումար:**

***2020թ.- 1451 ֆերմերների հողատարածքներից 682-ում առկա է անհամապատասխանություն, որից 298-ը, ըստ*** **համայնքի ղեկավարների տրամադրված տեղեկատվության ֆերմերները խաղողի այգիներ չեն ունեցել /ներկայացված է Հավելված 3-ով/:**

*Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 28.02.2019թ. թիվ 201-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 23-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների և վարկառուի* ներկայացված վարկի ստացման համար հիմք հանդիսացող տեղեկատվության /ձև 1/ և ֆերմերներին պատկանող խաղողի փաստացի այգիների չափերի միջև, որի արդյունքում ֆինանսական կազմակերպությանը *ներկայացվել է նախատեսված մթերման համար* 2025450 կգ ավելին մթերվող քանակ՝ 254,115.24 հազ. դրամի չափով:

«Արարատի գինու կոնյակի գործարան» ՓԲԸ-ի կողմից ստացված վարկերի համար ՀՀ պետական բյուջեից 2021թ. ընթացքում սուբսիդավորվել է 231,928.89 հազ.դրամ տոկոսագումար:

*2021թ.- 744 ֆերմերների հողատարածքներից 353-ում առկա է անհամապատասխանություն, որից 162-ը, ըստ* համայնքի ղեկավարների տրամադրված տեղեկատվության ֆերմերները խաղողի այգիներ չեն ունեցել /ներկայացված է Հավելված 4-ով/:

*Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 28.02.2019թ. թիվ 201-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 23-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների և վարկառուի* կողմից ներկայացված վարկի ստացման համար հիմք հանդիսացող տեղեկատվության /ձև 1/ և ֆերմերներին պատկանող խաղողի փաստացի այգիների չափերի միջև, որի արդյունքում ֆինանսական կազմակերպությանը *ներկայացվել է նախատեսված մթերման համար* 1532388 կգ ավելին մթերվող քանակ՝ 182,263.76 հազ. դրամի չափով:

«Արարատի գինու կոնյակի գործարան» ՓԲԸ-ի կողմից ստացված վարկերի համար ՀՀ պետական բյուջեից 2021թ. ընթացքում սուբսիդավորվել է 9,383.26 հազ.դրամ տոկոսագումար:

Տարբերության գումարները հաշվարկվել են ըստ ձև 1-ի ներկայացված տեղեկատվության, որոնց վերաբերյալ ըստ համայնքի ղեկավարների տրամադրված տեղեկանքների ֆերմերները խաղողի այգիներ չեն ունեցել:

## «Վեդի -Ալկո» ՓԲԸ

«Վեդի-Ալկո» ՓԲԸ-ի-ի և «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ի միջև 25.09.2020թ. կնքված վարկային պայմանագրերի համաձայն վարկառուին տրամադրվել է ընդհանուր 500,000.00 հազ. դրամ, իսկ «ՀԶՆԿ ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՓԲԸ-ի հետ 29.12.2020թ.՝ 500,000.00 դրամ գումարի չափով վարկ:

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրելով վարկի տրամադրման համար հիմք հանդիսացող վարկառուի կողմից ներկայացված տեղեկատվությունը /ձև 1/՝ այն համադրվել է ֆերմերների համայնքների հողի հարկի բազայում առկա տեղեկատվության հիման վրա տրամադրված տեղեկանքների հետ: ***Արդյունքում, պարզվել է, որ ներկայացված տեղեկատվության մեջ առկա են որոշակի***

*անհամապատասխանությունները, մասնավորապես՝ 297 ֆերմերների հողատարածքներից 166-ում առկա է անհամապատասխանություն, որից 44-ը, ըստ* համայնքի ղեկավարների տրամադրված տեղեկատվության ֆերմերները խաղողի այգիներ չեն ունեցել /ներկայացված է Հավելված 5-ով/:

*Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 28.02.2019թ. թիվ 201-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 23-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների* և վարկառուի կողմից ներկայացված վարկի ստացման համար հիմք հանդիսացող տեղեկատվության /ձև 1/ և ֆերմերներին պատկանող խաղողի փաստացի այգիների չափերի միջև, որի արդյունքում ֆինանսական կազմակերպությանը *ներկայացվել է նախատեսված մթերման համար* 358215 կգ ավելին մթերվող քանակ:

«Վեդի-Ալկո»ՓԲԸ-ի կողմից ստացված վարկերի համար ՀՀ պետական բյուջեից 2021թ. ընթացքում սուբսիդավորվել է 111,797.36 հազ.դրամ տոկոսագումար:

Տարբերության գումարը հաշվարկվել է ըստ ձև 1-ի ներկայացված տեղեկատվության, որոնց վերաբերյալ համայնքի ղեկավարների տրամադրված տեղեկանքների ֆերմերները խաղողի այգիներ չեն ունեցել:

## «Ոստան գինու գործարան» ՓԲԸ

«Ոստան գինու գործարան» ՓԲԸ և «Ամերիաբանկ» ՓԲԸ-ի միջև 23.09.2020թ. կնքված վարկային պայմանագրերի համաձայն վարկառուին տրամադրվել է ընդհանուր 2,700,000.00 հազ. Դրամ գումարի չափով վարկ, իսկ 12.11.2021թ.՝ 3,000,000.00 դրամ գումարի չափով վարկ:

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրելով վարկի տրամադրման համար հիմք հանդիսացող վարկառուի կողմից ներկայացված տեղեկատվությունը /ձև 1/՝ այն համադրվել է ֆերմերների համայնքների հողի հարկի բազայում առկա տեղեկատվության հիման վրա տրամադրված տեղեկանքների հետ: ***Արդյունքում, պարզվել է, որ ներկայացված տեղեկատվության մեջ առկա են որոշակի անհամապատասխանությունները, մասնավորապես՝***

***2020թ.- 526 ֆերմերների հողատարածքներից 283-ում առկա է անհամապատասխանություն, որից 72-ը, ըստ*** համայնքի ղեկավարների տրամադրված տեղեկատվության ֆերմերները խաղողի այգիներ չեն ունեցել /ներկայացված է Հավելված 6-ով/:

Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 28.02.2019թ. թիվ 201-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 23-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների և վարկառուի կողմից ներկայացված վարկի ստացման համար հիմք հանդիսացող տեղեկատվության /ձև 1/ և ֆերմերներին պատկանող խաղողի փաստացի

այգիների չափերի միջև, որի արդյունքում ֆինանսական կազմակերպությանը ներկայացվել է նախատեսված մթերման համար 1,784,215 կգ ավելին մթերվող քանակ՝ 235,900.05 հազ. դրամի չափով:

«Ոստան գինու գործարան» ՓԲԸ կողմից ստացված վարկերի համար ՀՀ պետական բյուջեից 2021թ. ընթացքում սուբսիդավորվել է 173,427.38 հազ.դրամ տոկոսագումար:

2021թ.- 255 ֆերմերների հողատարածքներից 126-ում առկա է անհամապատասխանություն, որից 39-ը, ըստ համայնքի ղեկավարների տրամադրված տեղեկատվության ֆերմերները խաղողի այգիներ չեն ունեցել /ներկայացված է Հավելված 7-ով/:

*Առկա անհամապատասխանություն ՀՀ կառավարության 28.02.2019թ. թիվ 201-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 23-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների և վարկառուի* կողմից ներկայացված վարկի ստացման համար հիմք հանդիսացող տեղեկատվության /ձև 1/ և ֆերմերներին պատկանող խաղողի փաստացի այգիների չափերի միջև, որի արդյունքում ֆինանսական կազմակերպությանը *ներկայացվել է նախատեսված մթերման համար* 680440 կգ ավելին մթերվող քանակ՝ 88,421.38 հազ. դրամի չափով:

«Ոստան գինու գործարան» ՓԲԸ կողմից ստացված վարկերի համար ՀՀ պետական բյուջեից 2021թ. ընթացքում սուբսիդավորվել է 10,951.30 հազ.դրամ տոկոսագումար:

Տարբերության գումարը հաշվարկվել է ըստ ձև 1-ի ներկայացված տեղեկատվության, որոնց վերաբերյալ համայնքի ղեկավարների տրամադրված տեղեկանքների ֆերմերները խաղողի այգիներ չեն ունեցել:

### *Հաշվեքննության օբյեկտի արձագանքը*

*Էկոնոմիկայի նախարարությունում 2021 թվականի երեք, վեց և ինն ամիսների կատարման հաշվեքննության արդյունքների վերաբերյալ ընթացիկ եզրակացությունների շրջանակներում Ծրագրի անհամապատասխանությունների կամ խեղաթյուրումների վերաբերյալ պարզաբանումները վարչության կողմից ներկայացվել են 2021 թվականի հուլիսի 14-ի ներքին N 194070, հոկտեմբերի 25-ի N 231524, նոյեմբերի 30-ի N 238299, 2022 թվականի հունվարի 14-ի N 267893, հունվարի 19-ի N 270529 և փետրվարի 18-ի հունվարի 19-ի N 277964 փաստաթղթերով, ինչպես նաև որոշ տեղեկատվություն տրամադրվել է աշխատանքային կարգով՝ հաշվի առնելով դրանց ծավալուն լինելու հանգամանքը:*

*Բացի այդ, Էկոնոմիկայի նախարարության կողմից գրություններ կներկայացվեն Էկոնոմիկայի նախարարությունում իրականացված 2021 թվականի 4-րդ եռամսյակի հաշվեքննության շրջանակներում «Արարատի գինու գործարան», «Ոստան գինու գործարան» ՍՊԸ-ներին և «Վեդի-Ալկո» ՓԲԸ-ին՝ վերջիններիս վերաբերյալ հաշվեքննության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների մասին պարզաբանումներ ստանալու նպատակով:*

*Հաշվեքննության արդյունքների վերաբերյալ նախորդ ժամանակահատվածների համար ներկայացված եզրակացություններում արձանագրված անհամապատասխանությունները և խեղաթյուրումները հաշվի առնելով Էկոնոմիկայի նախարարության կողմից մշակվել և Կառավարության կողմից 2021 թվականի սեպտեմբերի 2-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 201-Լ որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» N 1436-Լ որոշումը, որով մասնավորապես՝ Ծրագրի շրջանակներում ներկայացվող Ձև 1-երի լրացման նկատմամբ պատասխանատվության բարձրացման և արժանահավատ տվյալներ ներառելու նպատակով սահմանվել է, որ՝*

*- շահառուները ՖԿ-ին ներկայացվող վարկային հայտին պետք է կցեն վաճառողների հետ կնքված գյուղատնտեսական հումքի գնման պայմանագրերի պատճենները և դրանց հիման վրա լրացված N 1 ձևը՝ Excel ծրագրով և շահառուի կողմից ստորագրված կամ կնքված տարբերակը,*

*- շահառուից հայտը ստանալուց հետո ՖԿ-ն պետք է իրականացնի պայմանագրերում ներառված դրույթների և N 1 ձևի տեղեկատվության վերաբերյալ ծրագրով նախատեսված պահանջների, ինչպես նաև հայցվող վարկի չափի (գումարի) պայմանագրերի հետ համապատասխանության ուսումնասիրություն, որի արդյունքների հիման վրա լրամշակված, շահառուի կողմից ստորագրված կամ կնքված և համապատասխանությունը հավաստող ՖԿ-ի պատասխանատու աշխատակցի կողմից ստորագրված N 1 ձևը և դրա Excel ծրագրով տարբերակը պետք ներկայացվի Էկոնոմիկայի նախարարություն,*

*- գյուղատնտեսական հումքի գնման պայմանագրերում փոփոխություններ կատարվելու դեպքում ՖԿ-ի կողմից կրկին կատարվում է վերը նշված ուսումնասիրությունը, որի արդյունքների հիման վրա լրամշակված, շահառուի կողմից ստորագրված կամ կնքված և համապատասխանությունը հավաստող ՖԿ-ի պատասխանատու աշխատակցի կողմից ստորագրված փոփոխված N 1 ձևը և դրա Excel ծրագրով տարբերակը, ընդ որում՝ N 1 ձևում փոփոխված տողերն ընդգծվում կամ լրացվում են տարբերվող գունանշումով դարձյալ պետք է ներկայացվի է Էկոնոմիկայի նախարարություն,*

*- վարկառուին տրամադրված վարկի տոկոսադրույքի սուբսիդավորումն սկսվում է Ձև 1-ով սահմանված տեղեկատվությունը ՖԿ-ից ստանալուց հետո:*

***Հաշվեքննողների մեկնաբանությունը***

***«Արարատի գինու գործարան», «Ոսպան գինու գործարան», «Սպայկա» ՍՊԸ-ների և «Վեդի-Ալկո» ՓԲԸ-ի վերաբերյալ հաշվեքննության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերաբերյալ պարզաբանումներ չեն ներկայացվել:***

***«Միլկաթ», «Ամասիայի գլխավորող պանրագործարան», «Աշոցքի պանրի գործարան», «Գետափի գինու կոնյակի գործարան» ՍՊԸ-ների*** և ***«Արտաշատ - վինկոն» ՓԲԸ***-ի մասով հաշվեքննողների կողմից Նախարարությունում 2021 թվականի պետական բյուջեի տարեկան կատարման հաշվեքննության արձանագրության պարզաբանում չի ներկայացվել, փոխարենը ներկայացվել է 2021 թվականի ինն ամիսների հաշվեքննության արձանագրության պարզաբանումը:

**«Միլկաթ» ՍՊԸ հաշվեքննության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերաբերյալ ներկայացված պարզաբանումների վերաբերյալ**

«Միլկաթ» ՍՊԸ կողմից որպես պարզաբանում ներկայացված տեղեկանքները առ այն, որ Տարոն Ոսկանյանին է փոխանցվել իր համագյուղացիների կողմից մթերված կաթի գումարները համապատասխան լիազորագրով չի համապատասխանում ՀՀ կառավարության 28.02.2019թ. N 201-Լ որոշման 23-րդ կետի 2-րդ ենթակետի դրույթներին, այն է որ յուրաքանչյուր ֆերմերի հետ պետք է կնքվի պայմանագիր և այն արտացոլվի ՖԿ-ի կողմից ՀՀ էկոնոմիկայի նախարարություն ներկայացվող Ձև 1-ում, սակայն պայմանագիր է կնքված միայն Տ. Ո.ի հետ: Որպես ֆերմեր հանդես է եկել Տ. Ո.ը, որի անունով էլ դուրս են գրվել բոլոր գնման ակտերը: Բացի այդ՝ ընկերության և Տ. Ո.ի միջև կնքված պայմանագրի 1-ին կետի համաձայն Տ. Ո.ը պարտավոր էր հանձներ իր գյուղացիական տնտեսությունում արտադրված կովի կաթը, ինչը բխում է վերոնշված որոշման 23-րդ կետի 2-րդ ենթակետի ա/ պարբերության պահանջներից: Նույն խնդիրը վերաբերվում է նաև Մ. Ս.ի վերաբերյալ ներկայացված պարզաբանումներին:

«Միլկաթ» ՍՊԸ կողմից որպես պարզաբանում ներկայացված տեղեկանքները առ այն, որ Ռ. Հ.ը համաձայն իր հայտարարության պահել է համագյուղացիներին պատկանող թվով 82 կովերի, չի բխում ՀՀ կառավարության վերոգրյալ որոշմամբ սահմանված նպատակների և խնդիրների լուծմանը: Նշենք նաև, որ ըստ Սևան համայնքապետարանի կողմից հաշվեքննությանը ներակայցված 04.06.2021թ. և 04.10.2021թ. տեղեկանքներով Ռ. Հ.ի անվամբ ԽԵԿ հաշվառված չէ:

«Միլկաթ» ՍՊԸ կողմից որպես պարզաբանում ներկայացված Գեղարքունիքի մարզի Հայրավանք համայնքապետարանի կողմից 31.05.2021թ. տրված տեղեկանքը այն մասին, որ Ա. Ա. Հ.ը և Դ. Ա. Հ.ը ունեն յուրաքանչյուրը ունի 90 գլուխ ԽԵԿ, հայտնում ենք, որ ըստ Հայրավանքի համայնքի անասունների հաշվառման մատյանի և ԳԾԿ ՊՈԱԿ-ի գրանցամատյանի տվյալների համաձայն Դ. Ա. Հ.ը ունի 68 գլուխ ԽԵԿ, իսկ Ա. Ա. Հ.ի անվամբ ԽԵԿ հաշվառված չէ, ինչի վերաբերյալ 03.06.2021 և 04.10.2021թ. համայնքապետարանի կողմից հաշվեքննությանը տրամադրվել է համապատասխան տեղեկանքները:

**«Ամասիայի գլխավորող պանրագործարան» ՍՊԸ-ի հաշվեքննության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերաբերյալ ներկայացված պարզաբանումների վերաբերյալ**

«Ամասիայի գլխավորող պանրագործարան» ՍՊԸ-ի կողմից որպես պարզաբանում ներկայացված տեղեկանքները առ այն, որ Վ. Բ.ը և Մ. Ն.ը 2020թ. և

2021թ. ապրիլ-դեկտեմբեր ամիսներին անասնակերի սղության պատճառով իրենց խնամքի տակ են պահել համագյուղացիների պատկանող Խեկ-ը և կաթի մթերումները պատկանում է իրենց, չի բխում ՀՀ կառավարության 28.02.2019թ. N 201-Լ որոշման որոշմամբ սահմանված նպատակների և խնդիրների լուծմանը:

***«Աշոցքի պանրի գործարան» ՍՊԸ հաշվեքննության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերաբերյալ ներկայացված պարզաբանումների վերաբերյալ***

**«Աշոցքի պանրի գործարան» ՍՊԸ** կողմից ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում իրականացված 2021թ. ինն ամիսների հաշվեքննության արձանագրությունում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ որպես պարզաբանում ներկայացված է տեղեկանքը առ այն, որ հաշվեքննությամբ արձանագրված անհամապատասխանությունները ընդունվել են: Պարզաբանմամբ նշվել է, որ դրանք առաջացել են պայմանագրերի կնքման ընթացքում ֆերմերների համայնքների անունները սխալմամբ լրացվելով այլ համայնքների անուններ, որին կից ներկայացվել են նաև համայնքների ղեկավարների կողմից տրված տեղեկանքները բնակության վայրի և ԽԵԿ-երի վերաբերյալ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված պարզաբանումները հաշվեքննությանն են ներկայացվել 2022թ. ապրիլ ամսին, դրանց արժանահավատության վերաբերյալ կարծիք տալ չենք կարող: Նշենք նաև, որ ուսումնասիրելով ներկայացված տեղեկանքները և դրանք համադրելով հաշվեքննության ընթացքում համայնքների կողմից տրամադրած տեղեկատվության հետ, նույնպես առկա են որոշակի անհամապատասխանություններ ֆերմերներին պատկանող ԽԵԿ-երի քանակների միջև:

***«Գետափի գինու կոնյակի գործարան» ՍՊԸ հաշվեքննության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների և խեղաթյուրումների վերաբերյալ ներկայացված պարզաբանումների վերաբերյալ***

***«Գետափի գինու կոնյակի գործարան» ՍՊԸ*** *կողմից որպես պարզաբանում ներկայացված է տեղեկանք առ այն, որ Արմենակ Ասլանյանը Սասունիկ համայնքում ունի 12 հա խաղողի այգի, սակայն Սասունիկ համայնքի ղեկավարի կողմից 23.11.2021թ. հաշվեքննությանը տրամադրած տեղեկանքի համաձայն Ա. Ա.ը ունի 6.7 հա խաղողի այգի: «Գոլդեն Գրեյփ Արմաս» ՍՊԸ-ի վերաբերյալ ներկայացված սեփականության իրավունքի վկայականներում խաղողի այգիների չափը նշված է 57.66 հա, որի վերաբերյալ 24.11.2021թ. Կոշ համայնքապետարանի կողմից հաշվեքննությանը տրամադրվել է տեղեկանք:*

***«Արփաշափ - վինկոն» ՓԲԸ-ի հաշվեքննության արդյունքում արձանագրված անհամապափասխանությունների և խեղաթյուրումների վերաբերյալ ներկայացված պարզաբանումների վերաբերյալ***

**«Արտաշատ - վինկոն» ՓԲԸ** կողմից ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում իրականացված 2021թ. ինն ամիսների հաշվեքննության արձանագրությունում արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ որպես պարզաբանում ներկայացված է տեղեկանքը առ այն, որ խաղողի մթերումները իրականացվել են համայնքների կողմից տրված տեղեկանքների հիման վրա /ներկայացված է նաև համայնքների կողմից շահառու ընկերությանը տրամադրած հողի առկայության և չափի վերաբերյալ տեղեկանքներ/: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված պարզաբանումները հաշվեքննությանն են ներկայացվել 2022թ. ապրիլ ամսին, դրանց արժանահավատության վերաբերյալ կարծիք տալ չենք կարող: Նշենք նաև, որ ուսումնասիրելով ներկայացված տեղեկանքները և դրանք համադրելով հաշվեքննության ընթացքում համայնքի ղեկավարների կողմից տրամադրած տեղեկատվության հետ, առկա են անհամապատասխանություններ հողերի առկայության և չափերի միջև:

***Եզրակացություն***

***Գյուղափնփեսական հումքի մթերումով զբաղվող թվով ինը կազմակերպությունների՝ «Սպայկա», «Միլկաթ», «Ամասիայի գլխավորող պանրագործարան» և «Աշոցքի պանրի գործարան» «Գեփափի գինու կոնյակի գործարան» ՍՊԸ-ներին, «Արփաշափ-վինկոն», «Արարափի գինու կոնյակի գործարան», «Վեդի-Ալկո» և «Ոսփան գինու գործարան» ՓԲԸ-ներին Ծրագրի շրջանակներում ֆինանսական կազմակերպությունների կողմից փրամադրվել է 12,298,978.00 հազ.դրամ վարկ հումքի մթերման համար: ՀՀ պեփական բյուջեից 2021 թվականի ընթացքում սուբսիդավորվել է 717,959.18 հազ.դրամ վարկի փոկոսագումար:***

***Առկա է անհամապափասխանություն ՀՀ կառավարության 28.02.2019թ. թիվ 201-Լ որոշմամբ հասփափված ծրագրի 23-րդ կեփի 2-րդ ենթակեփի պահանջների հեփ՝ վարկառուների կողմից ներկայացված վարկերի սփացման համար հիմք հանդիսացող փեղեկափվության /ձև 1/ և ֆերմերներին պափկանող փասփացի անասնագլխաքանակի և հողերի քանակների միջև:***

## 2. Գյուղատնտեսության խթանման 1022 Ծրագրի՝ Գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող

**վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում 12004՝ միջոցառման շրջանակներում իրականացված մոնիթորինգի վերաբերյալ**

***Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 201-L որոշման «Ծրագրի մոնիթորինգը և իրականացման ռիսկերի կառավարումը» բաժնի 33-րդ կետի պահանջների հետ, այն է՝ Ծրագրի մոնիթորինգն իրականացնում են ԳՖԿ-ն և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը՝ ՖԿ-ի կողմից ներկայացված տեղեկատվության և վարկառուների ընտրանքային ուսումնասիրության հիման վրա:***

Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 201-L որոշման «Ծրագրի մոնիթորինգը և իրականացման ռիսկերի կառավարումը» բաժնի 33-րդ կետի, ծրագրի մոնիթորինգն իրականացնում են ԳՖԿ-ն և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը՝ ՖԿ-ի կողմից ներկայացված տեղեկատվության և վարկառուների ընտրանքային ուսումնասիրության հիման վրա: Մոնիթորինգի տեսակները՝ փաստաթղթային, այցելություններ և հարցումներ, ուղղությունները, ծավալը և նպատակայնության համապատասխանության պարամետրերը սահմանվում են ԳՖԿ-ի կողմից մշակված ներքին ընթացակարգով: Հաշվեքննությամբ պարզվել է, որ 2021թ. ընթացքում ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից տվյալ ծրագրի շրջանակներում մոնիթորինգ չի իրականացվել: ԳՖԿ-ի կողմից 2021թ. ընթացքում փաստաթղթային մոնիթորինգ է իրականացվել թվով 9 տնտեսավարողների վարկային փաթեթները, որի արդյունքում՝ ըստ ներկայացված հաշվետվությունների, վարկային միջոցները տրամադրվել և օգտագործվել են ծրագրի պահանջների շրջանակներում:

***Եզրակացություն***

Գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ գծով մոնիթորինգի իրականացված ընդամենը 9 տնտեսավարողների վարկային փաթեթների ընդհանուր գումարը կազմել է 380,500.00 հազ. դրամ, որը կազմում է ընդհանուր վարկային փաթեթի /52,959,177.00 հազ. դրամ/՝ 0.7 տոկոսն, իսկ ընդհանուր սուբսիդավորված գումարի մասով /2,684,845.00 հազ. դրամ/ կազմում է 0.8 տոկոսը /21,423.5÷2,684,845.00/:

**3. Գյուղատնտեսության խթանման 1022 Ծրագրի՝ Գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների**

**սուբսիդավորում՝ 12001 միջոցառման շրջանակներում վարկառու տնտեսվարողների վարկային միջոցների նպատակային օգտագործման մոնիթորինգի արդյունքների և հայտնաբերված խախտումների հաշվետվության վերաբերյալ**

***Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 7-ի N 184-Լ որոշման «Ծրագրի մոնիթորինգը» բաժնի 20-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների հետ, այն է՝ «Ֆինանսական կառույցը նախատեսում է հաշվետվություն ներկայացնել ԳՖԿ-ին և Նախարարությանը: Հաշվետվությունը պետք է պարունակի մանրամասն տեղեկատվություն ծրագրի ընթացքի մասին, այդ թվում՝ տեղեկատվություն իրականացված նպատակային մոնիթորինգի արդյունքների մասին.»***

ՀՀ կառավարության 20.05.2021թ. N 832-Լ որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետի համաձայն, ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 7-ի N 184-Լ որոշման 17-րդ կետը այն է՝ «Ծրագրի մոնիթորինգն իրականացնում է Նախարարությունը՝ վարկառու տնտեսվարող սուբյեկտներում ուսումնասիրություններ իրականացնելով» ուժը կորցրած է ճանաչվել: Արդյունքում վարկառուների կողմից օգտագործված վարկային միջոցների նպատակայնության մոնիթորինգի իրականացման գործառույթը միայն իրականացվում է ՖԿ-ների կողմից: Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 7-ի N 184-Լ որոշման Ծրագրի մոնիթորինգը բաժնի 19-րդ կետի՝ «Վարկի տրամադրումից հետո Ֆինանսական կառույցի կողմից վեցամսյա ժամկետում իրականացվում է նպատակային մոնիթորինգ և Ֆինանսական կառույցի ներքին իրավական ակտերին համապատասխան՝ ֆինանսական մոնիթորինգ»:

Հաշվեքննիչ պալատը գրությամբ դիմել էր Նախարարությանը, որպեսզի տրամադրվի ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 7-ի N 184-Լ որոշմամբ հաստատված Ծրագրի 18-րդ կետով սահմանված վիճակագրական տվյալների շտեմարանի, 20-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ՖԿ-նեի կողմից ԳՖԿ-ին ներկայացված նպատակային մոնիթորինգի արդյունքների և 3-րդ կետով սահմանված՝ հայտնաբերված խախտումների վերաբերյալ տեղեկատվություն: Սակայն Նախարարության պատասխան գրությամբ, տրամադրվել է միայն վիճակագրական տվյալների շտեմարանը, իսկ ՖԿ-նեի կողմից ԳՖԿ-ին ներկայացված նպատակային մոնիթորինգի արդյունքների և հայտնաբերված խախտումների վերաբերյալ տեղեկատվություն չի ներկայացվել:

***Հաշվեքննության օբյեկտի արձագանքը***

Հաշվեքննության օբյեկտի կողմից արձագանք չի ներկայացվել

***Եզրակացություն***

«Գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում» միջոցառման շրջանակներում ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 7-ի N 184-Լ որոշման «Ծրագրի մոնիթորինգը» բաժնի 20-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ ՖԿ-ների կողմից ԳՖԿ-ին և Նախարարությանը ներկայացված նպատակային մոնիթորինգի արդյունքների և հայտնաբերված խախտումների վերաբերյալ տեղեկատվությունը հաշվեքննողներին չի ներկայացվել:

## 4. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում տարածաշրջանները սպասարկող համաճարակաբանների և անասնաբույժների հետ կնքված պայմանագրերի վերաբերյալ

<u>*Կրկնվող կետ*</u>

***Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի և կնքված դրամաշնորհի պայմանագրի 2.4.7. կետի պահանջների հետ, այն է. «Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան»:***

***Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» թիվ 526-Ն որոշման 16-րդ և 17-րդ կետով սահմանված պահանջների մասով՝ գնման առարկան՝ Ծրագրով նախատեսված ծառայությունները, չի ներառվել գնումների պլանում:***

Ծրագիրն իրականացվում է երկու բաղադրիչներով՝

1. 4266 - Առողջապահական և լաբորատոր նյութեր տնտեսագիտական հոդվածով՝ Կանխարգելիչ, ախտորոշիչ և ախտահանիչ միջոցների, ինչպես նաև անասնաբուժական պարագաների ձեռքբերում /առաջին բաղադրիչի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է սույն ընթացիկ եզրակացության 13-րդ կետում/,

2. 4637 - Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին տնտեսագիտական հոդվածով՝ Հակահամաճարակային միջոցառումների իրականացում:

Ծրագրի երկրորդ բաղադրիչի՝ 4637 - տնտեսագիտական հոդվածով՝ Հակահամաճարակային միջոցառումների իրականացման համար ՀՀ պետական բյուջեից 2021 թվականին ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 1,101,831.10 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 1,090,631.09 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 1,087,582.62 հազ. դրամ: Նախարարության և ԳԾԿ-ի միջև 2021 թվականի հունվարի 26-ին կնքվել է թիվ 17-21 պայմանագիրը՝ (Այս գլխում այսուհետ՝ Պայմանագիր) հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 30-ի «ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 2215-Ն որոշումը:

Պայմանագրով՝ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» 11001 միջոցառման շրջանակներում, նախատեսվել է տրամադրել մինչև 1,128,794.10 հազ. դրամ: 2021 թվականի դեկտեմբերի 29-ին կնքվել թիվ 596-21 համաձայնագիրը, ինչի հետևանքով պայմանագրի գումարը կազմել է 1,101,831.10 հազ.դրամ: 2021 թվականի ընթացքում հանրապետության բոլոր համայնքներում նախատեսվել է կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելմանը ուղղված 7 հիվանդությունների /բրուցելյոզ, տուբերկուլյոզ, լեյկոզ, սիբիրախտ, դաբաղ, խշխշան պալար, հանգուցավոր մաշկաբորբ/ նկատմամբ, իրականացնել 5,168,605 պատվաստումներ և ախտորոշիչ միջոցառումներ:

Ծրագրով նախատեսված աշխատանքներն իրականացվել են ՀՀ 10 մարզերի 38 տարածաշրջաններում՝ ԳԾԿ-ի 38 համաճարակաբանների և անասնաբուժական վճարովի ծառայությունների մատուցման պայմանագիր կնքած 563 անասնաբույժների միջոցով: Ծրագրի ծախսերի նախահաշվով, վերը նշված գումարը նախատեսվել է համաճարակաբանների և անասնաբույժների աշխատավարձերի վճարման համար:

Ծրագրի ծառայությունների մատուցման գործառույթներն իրականացվել են անասնաբույժների և համաճարակաբանների հետ անասնաբուժական վճարովի ծառայությունների մատուցման պայմանագիր կնքելու միջոցով:

2021թ.-ի հունվար ամսվա երկրորդ կեսից սկսած Ծրագրով նախատեսված անասնաբուժական վճարովի ծառայությունների ձեռքբերման նպատակով ԳԾԿ-ի կողմից կնքվել են քաղաքացիաիրավական պայմանագրեր տարածաշրջանները սպասարկող 38 համաճարակաբանների և համայնքները սպասարկող 563 անասնաբույժների հետ:

Այսպիսով, թվով 38 համաճարակաբանների հետ կնքված պայմանագրերով ամեն ամիս նախատեսվել է մատուցված ծառայությունների դիմաց յուրաքանչյուրին վճարել 200.00 հազ. դրամ, իսկ 563 անասնաբույժների հետ կնքված պայմանագրերով՝ տարվա ընթացքում իրականացվելիք միջոցառումների քանակը կազմում է 5,132,478 հատ / կամ մեկ միջոցառման իրականացման միավորի արժեքը կազմել է 167 դրամ/: Պայմանագրով նախատեսվածից պակաս է իրականացվել 36,127 հատ միջոցառում:

Անասնաբույժների և համաճարակաբանների հետ պայմանագրերը կնքվել են առանց մրցույթի կազմակերպման՝ շրջանցելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջները, ինչպես նաև ԳԾԿ-ի գնումների պլանում ներառված չէ տվյալ ծառայությունների ձեռքբերումը: Տարածաշրջանները սպասարկող համաճարակաբանների և համայնքները սպասարկող անասնաբույժների հետ առանց մրցույթի պայմանագրի կնքման հետևանքով չի պահպանվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները, այն է. «Գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում»:

***<u>ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում 2021 թվականի ընթացքում իրականացվել է պետական բյուջեի երեք, վեց, ինն և տարեկան կատարման հաշվեքննություններ: 2021 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման հաշվեքննության շրջանակում իրականացվել է ստուգում ԳԾԿ-ում: Ուսումնասիրության ընթացքում արձանագրված անհամապատասխանությունները և խեղաթյուրումները ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն:</u>***

***Հաշվեքննության օբյեկտի արձագանքը***

Հաշվեքննության օբյեկտի կողմից արձագանք չի ներկայացվել

***Եզրակացություն***

Անասնաբույժների և համաճարակաբանների հետ պայմանագրերը կնքվել են առանց մրցույթի կազմակերպման՝ շրջանցելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջները, ինչպես նաև ԳԾԿ-ի գնումների պլանում ներառված չէ տվյալ ծառայությունների ձեռքբերումը: Տարածաշրջանները սպասարկող համաճարակաբանների և համայնքները սպասարկող անասնաբույժների հետ առանց մրցույթի պայմանագրի կնքման հետևանքով չի պահպանվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները, այն է. «Գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում»:

## 5. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում Նախարարության և ԳԾԿ-ի միջև կնքված պայմանագրով սահմանված հսկողական մեխանիզմների վերաբերյալ

***Այսպիսով, առկա է անհամապատասխանություն Պայմանագրի 2.4.4 կետով և 3-րդ մասով սահմանված դրույթների հետ:***

«Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» միջոցառման շրջանակներում 2021 թվականի հունվարի 26-ին Նախարարության և ԳԾԿ-ի միջև կնքվել է «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» թիվ 17-21 պայմանագիրը /այս գլխում այսուհետ՝ Պայմանագիր/:

Ըստ պայմանագրի նախատեսվել է իրականացնել հանրապետության բոլոր համայնքներում կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելմանը ուղղված 7 հիվանդությունների /բրուցելյոզ, տուբերկուլյոզ, լեյկոզ, սիբիրախտ, դաբաղ, խշխշան պալար, հանգուցավոր մաշկաբորբ/ նկատմամբ 5,168,605 պատվաստումներ և ախտորոշիչ միջոցառումներ:

Պայմանագրի 2.4.4. կետով սահմանված է, որ ԳԾԿ-ն պարտավոր է Նախարարությանը ծրագրի ավարտից հետո ներկայացնել ամփոփ հաշվետվություն: Ինչպես նաև Պայմանագրի 3-րդ մասով սահմանվում է իրականացնել մոնիթորինգ:

Հաշվեքննողների կողմից Պայմանագրով սահմանված վերոնշյալ դրույթների իրականացման վերաբերյալ պահանջված տեղեկատվությունը չի տրամադրվել:

***Հաշվեքննության օբյեկտի արձագանքը***

ԳԾԿ-ի կողմից պայմանագրով սահմանված 2.4.4 կետի համաձայն 2022 թվականի հունվարի 19-ին թիվ Մ/1726-2022 գրությամբ տրամադրվել է ամփոփ հաշվետվություն ծրագրերի վերաբերյալ (կցվում է): Ինչ վերաբերում է պայմանագրի 3-րդ մասով սահմանված դրույթին, ապա մասնագիտական ստորաբաժանման կողմից յուրաքանչյուր եռամսյակ իրականացվում է արդյունքային ցուցանիշների կատարման նկատմամբ մոնիթորինգ՝ աշխատանքային կարգով, որոնք չեն արձանագրվել:

***Եզրակացություն***

Հաշվեքննողների կողմից մոնիթորինիգի վերաբերյալ ներկայացված պարզաբանումն ընդունելի չէ, քանի որ աշխատանքների կատարման վերաբերյալ փաստաթղթեր չեն ներկայացվել:

## 6. Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման 1224-12001 Ծրագիր մոնիթորինգի վերաբերյալ

***Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի 6-րդ գլխի 6.1 կետով սահմանված պահանջների մասով:***

ՀՀ պետական բյուջեից Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի (այս գլխում այսուհետ՝ Ծրագիր) իրականացման համար 2021 թվականին ՀՀ պետական բյուջեի տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 6,552,749.70 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 6,552,595 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 6,991,973.02 հազ. դրամ/դրամարկղային և փաստացի ծախսերի տարբերությունը պայմանավորված է ֆինանսական կառույցների կողմից ներկայացված հայտերով/:

Ծրագիրն ուղղված է Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման նպատակով տնտեսվարողներին ֆինանսական օժանդակության տրամադրմանը՝ նպատակային վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման եղանակով: Ծրագիրն կարգավորվում է հետևյալ նորմատիվ իրավական ակտերի միջոցով.

- ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2021 թվականի օգոստոսի 19-ի «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին միջոցառման շրջանակում տրամադրվող օժանդակության գործիքի կիրառման կարգը հաստատելու մասին» (այսուհետ՝Կարգ) թիվ N 713-Ա որոշմամբ,
- ՀՀ Կառավարության 2020 թվականի մարտի 26-ի «Կորոնավիրուսի տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին միջոցառումը հաստատելու մասին» (այսուհետ՝ Որոշում) թիվ N 355-Լ որոշմամբ,
- Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման առաջին միջոցառման շրջանակներում տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման վերաբերյալ ՀՀ էկոնոմիկայի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) և առևտրային բանկերի կամ վարկային կազմակերպությունների (այսուհետ՝ Ֆինանսական կառույց) միջև կնքված պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Նախարարության և Ֆինանսական կառույցների միջև կնքված Պայմանագրի 6-րդ գլխի 6.1 կետի համաձայն՝ միջոցառման մոնիթորինգն իրականացնում է Նախարարությունը:

Հաշվեքննության ընթացքում պարզվել է, որ Նախարարության որևէ ստորաբաժանում լիազորված չէ մոնիթորինգն իրականացնելու համար, ինչպես նաև չի հաստատվել մոնիթորինգ իրականացնելու կարգ: Ծրագրի ողջ ընթացքում Նախարարության կողմից չի իրականցվել մոնիթորինգ:

***Հաշվեքննության օբյեկտի արձագանքը***

Հաշվեքննության օբյեկտի կողմից արձագանք չի ներկայացվել

***Եզրակացություն***

Նախարարության և Ֆինանսական կառույցների միջև կնքված Պայմանագրի 6-րդ գլխի 6.1 կետի համաձայն՝ միջոցառման մոնիթորինգն իրականացնում է Նախարարությունը: Ծրագրի ողջ ընթացքում Նախարարության կողմից չի իրականցվել մոնիթորինգ: ***Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի 6-րդ գլխի 6.1 կետով սահմանված պահանջների մասով:***

## 7. 1058-11001 Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ ծրագրի շրջանակներում Նախարարության թափուր հաստիքների վերաբերյալ

*<u>Կրկնվող կետ</u>*

***Առկա է անհամապատասխանություն «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի մասով, համաձայն որի, քաղաքացիական ծառայության պաշտոնը թափուր մնալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում պետք է հայտարարվի մրցույթ, ինչը չի իրականացվել:***

ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2021 թվականի հունվարի 25-ի թիվ 30-Ա հրամանով հաստատվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության հաստիքացուցակը, որում ՀՀ էկոնոմիկայի նախարարի համապատասխան հրամաններով 2021 թվականի ընթացքում կատարվել են համապատասխան փոփոխություններ: Ըստ հրամանի՝ 25.01.2021թ. դրությամբ նախատեսվում է 459 հաստիքային միավոր, որից 112-ը եղել են թափուր պաշտոններ, որը կազմում է 24.4%: 01.06.2021թ. դրությամբ համաձայն նշված հրամանի հաստիքների թիվը նվազել է /կրճատվել է/ և կազմել է 390 միավոր, որից 87-ը թափուր պաշտոններ են, որը կազմում է 22.3%: Ուսումնասիրությամբ

պարզվեց, որ 01.06.2021թ. դրությամբ 87 թափուր հաստիքներից 65-ը 01.12.2021թ. դրությամբ նույնությամբ մնացել են թափուր:

***Հաշվեքննության օբյեկտի արձագանքը***

Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնների թիվը չի նվազում, քանի որ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում (այսուհետ՝ Նախարարություն) անընդմեջ առաջանում են քաղաքացիական ծառայության թափուր պաշտոններ ինչպես կադրերի հոսունության, այնպես էլ մրցույթների արդյունքում Նախարարության քաղաքացիական ծառայողների ավելի բարձր պաշտոններին նշանակվելու հետևանքով: Մրցույթների անցկացման գործընթացը կրում է շարունակական բնույթ, և մրցույթներով համալրվում են ինչպես առկա թափուր պաշտոնները, այնպես էլ ընթացքում առաջացող թափուրները:Միաժամանակ հայտնում եմ, որ վերջիններիս համալրումը արդեն իսկ կազմակերպվում է «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան:

***Հաշվեքննողների մեկնաբանությունը***

*Հաշվեքննության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները վերաբերվում են այն թափուր պաշտոններին, որոնք 01.01.2021-31.12.2021թթ. ժամանակահատվածում նույնությամբ մնացել են թափուր:*

***Եզրակացություն***

***Առկա է անհամապատասխանություն «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի մասով, համաձայն որի, քաղաքացիական ծառայության պաշտոնը թափուր մնալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում պետք է հայտարարվի մրցույթ, ինչը չի իրականացվել:***

# V. ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

## 8. Գյուղատնտեսության խթանման 1022 Ծրագրի՝ Գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում 12004՝ միջոցառման շրջանակներում արձանագրված խեղաթյուրումների վերաբերյալ

*Առկա է խեղաթյուրում 717,959.18 հազ.դրամ փոկոսագումարների չափով:*

*Նշված միջոցառման շրջանակներում արձանագրված անհամապատասխանությունները, հաշվեքննության օբյեկտի արձագանքը, հաշվեքննողների մեկնաբանությունը և եզրակացությունը ներկայացված է սույն հաշվեքննության 1-ին կետում:*

*Ինը կազմակերպությունների մասով արձանագրված անհամապատասխանությունները հանգեցրել են խեղաթյուրման 717,959.18 հազ.դրամի տոկոսագումարի չափով:*

Աղյուսակ 11,հազ.դրամ

| | Կազմակերպության /շահառուի/ անվանումը | Մթերվող հումքի տեսակ | Ստացված վարկ /հազ.դրամ/ | 2021թ. Ընթացքում տրամադրված սուբսիդիա |
|---|---|---|---|---|
| 1 | «Սպայկա» ՍՊԸ | Կաթ | 100,000.00 | 6,055.60 |
| 2 | «Միլկաթ» ՍՊԸ | Կաթ | 40,000.00 | 2,373.97 |
| 3 | «Ամասիայի գյխավորող պանրագործարան» ՍՊԸ | Կաթ | 320,000.00 | 15,786.69 |
| 4 | «Աշոցքի պանրի գործարան» ՍՊԸ | Կաթ | 200,000.00 | 6,843.12 |
| 5 | «Գետափի գինու կոնյակի գործարան» ՍՊԸ | Խաղող | 200,000.00 | 23,578.51 |
| 6 | «Արտաշատ - վինկոն» ՓԲԸ-ի | Խաղող | 1,000,000.00 | 121,650.19 |
| 7 | «Արարատի գինու գործարան» ՓԲԸ | Խաղող | 3,738,978.00 | 245,495.08 |
| 8 | «Վեդի -Ալկո» ՓԲԸ | Խաղող | 1,000,000.00 | 111,797.36 |
| 9 | «Ոստան գինու գործարան» ՓԲԸ | Խաղող | 5,700,000.00 | 184,378.68 |
| | **Ընդամենը** | | **12,298,978.00** | **717,959.20** |

## 9. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում ԳԾԿ-ի և ՀԱԲԼԾԿ-ի կողմից 2021 թվականի ընթացքում ներկայացված հաշվետվությունների քանակային /արդյունքային/ ցուցանիշների վերաբերյալ

*Կրկնվող կետ*

***Առկա է շեղում Ծրագրի միջոցառման գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների վերաբերյալ 01.01.2021-31.12.2021թ. ժամանակահատվածի համար ԳԾԿ-ի և ՀԱԲԼԾԿ-ի կողմից ներկայացված հաշվետվությունների միջև: Հաշվետվությունների միջև առկա շեղումը հանգեցրել է 1,248.81 հազ.դրամ հազ.դրամ գումարի չափով խեղաթյուրման:***

Համաձայն ԳԾԿ-ի կողմից Ծրագրի միջոցառման գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների վերաբերյալ 01.01.2021թ.-31.12.2021թ. ժամանակաշրջանի համար ճշտված պլանով նախատեսվել է իրականացնել 944,619 հատ բրուցելյոզի նմուշառում, փաստացի կատարվել է 864,842 հատ նմուշառում: Հաշվետու ժամանակահատվածի փաստացի և պլանային ցուցանիշների տարբերությունը կազմել է 79,777 հատ, որը կազմակերպության կողմից պարզաբանվել է. «Շեղումը, մասնավորապես, պայմանավորված է մանր եղջերավոր կենդանիների անհասանելիությամբ՝ դրանց հաշվառման և համարակալման իրականացման բացառությամբ»: ՀԱԲԼԾԿ-ի կողմից Ծրագրի միջոցառման գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների վերաբերյալ 01.01.2021-30.12.2021թ. ժամանակահատվածի համար ներկայացված հաշվետվության, իրականացվել է 895,191 հատ լաբորատոր փորձաքննություն, որից 877,252 հատ բրուցելյոզի փորձաքննություն, այդ թվում բրուցելյոզ հիվանդության կասկածով մարզային ստորաբաժանումներից կենտրոնական լաբորատորիային տրամադրված նմուշների քանակը կազմում է 8,535 հատ: Այսպիսով, 01.01.2021-31.12.2021թ ժամանակահատվածի համար ըստ ներկայացված հաշվետվությունների բրուցելյոզի ախտորոշման գծով ԳԾԿ-ի կողմից ներկայացված նմուշառումների և ՀԱԲԼԾԿ-ի կողմից իրականացված լաբորատոր փորձաքննությունների տարբերությունը կազմում է 3,876 հատ, հաշվի առնելով 8,535 հատ կենտրոնական լաբորատորիայի

փորձաքննությունները /877,253-8535/, որը գումարային արտահայտությամբ կազմում է 1,248.81 հազ.դրամ /3876*322.19/:

***Հաշվեքննության օբյեկտի արձագանքը***

Ծրագրի շրջանակներում անասնաբույժի կողմից բրուցելոզի նկատմամբ արյունառումը դիտարկվում է մեկ նմուշ, որի նկատմամբ ՀԱԲԼԾԿ-ի կողմից իրականացվում է մի քանի փորձաքննություններ՝ ագլյուտինացիայի ռեակցիա, ՊՇՌ, ԻՖԱ մեթոդներով:

Հարկ է նշել, որ անասնաբույժի կողմից ներկայացվում է նմուշ, իսկ տվյալ նմուշի նկատմամբ իրականացվում են լաբորատոր փորձաքննություններ վերոգրյալ մեթոդներով:

Հետևաբար, նմուշի և փորձաքննության միջև տարբերությունները առկա կլինեն, որն էլ արտացոլվել է ԳԾԿ-ի կողմից ներկայցված նմուշառումների և ՀԱԲԼԾԿ-ի կողմից իրականացված լաբորատոր փորձաքննությունների միջև:

***Հաշվեքննողների մեկնաբանությունը***

Հաշվեքննողների կողմից ներկայացված պարզաբանումն ընդունելի չէ, քանի որ արձանագրված փաստերը վերաբերում են միայն բրուցելյոզի ախտորոշմանը, բացի այդ կրկնակի փորձաքննությունների հետ կապված փաստը հաշվի է առնվել հաշվեքննության ընթացքում:

***Եզրակացություն***

2021 թվականի համար ըստ ներկայացված հաշվետվությունների բրուցելյոզի ախտորոշման գծով ԳԾԿ-ի կողմից ներկայացված նմուշառումների և ՀԱԲԼԾԿ-ի կողմից իրականացված լաբորատոր փորձաքննությունների տարբերությունը կազմում է 3,876 հատ, որը գումարային արտահայտությամբ կազմում է 1,248.81 հազ.դրամ: ***Առկա է շեղում Ծրագրի միջոցառման գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների վերաբերյալ 01.01.2021-31.12.2021թ. ժամանակահատվածի համար ԳԾԿ-ի և ՀԱԲԼԾԿ-ի կողմից ներկայացված հաշվետվությունների միջև: Հաշվետվությունների միջև առկա շեղումը հանգեցրել է 1,248.81 հազ.դրամ հազ.դրամ գումարի չափով խեղաթյուրման:***

## 10. Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման՝ 1224 ծրագիր Կորոնավիրուսով (COVID-19) պայմանավորված մեկուսացված անձանց կեցության ապահովում 11001 միջոցառման վերաբերյալ

***<u>Կրկնվող կետ</u>***

***Առկա է խեղաթյուրում 1,145.78 հազ.դրամ գումարի չափով:***

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2021 թվականի տարեկան կատարման վերաբերյալ ներկայացված հաշվետվության «Կորոնավիրուսով պայմանավորված

մեկուսացված անձանց կեցության ապահովում» միջոցառման շրջանակներում տարեկան ճշտված պլանով նախատեսվել է 1,131,462.00 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 1,130,712.42 հազ. դրամ, փաստացի ծախսը կազմել է 1,130,712.42 հազ. դրամ:

Ծրագիրն ուղղված է Կորոնավիրուսային (COVID-19) հիվանդության հետևանքով առաջացած համավարակի ընթացքում ՀՀ տարածքում մեկուսացված անձանց և բժիշկների կեցության ապահովման կազմակերպմանը, մեկուսացված անձանց, բժիշկների և պացիենտների սննդի ապահովման կազմակերպմանը: Ծրագիրը կարգավորվում է հետևյալ նորմատիվ իրավական ակտերի միջոցով.

- Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի թիվ 298-Ն որոշում,
- Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2020 թվականի հունիսի 3-ի թիվ 604-Լ, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2020 թվականի հունիսի 4-ի թիվ 1753-Լ համատեղ հրաման /այսուհետ՝ Համատեղ հրաման/:

2021 թվականի 1,130,712.42 հազ. դրամի փաստացի ծախսերը սննդամթերքի մատակարար կազմակերպությունների կողմից հաշիվ-ապրանքագրերով դուրս են գրվել 2021 թվականի հունվար - ապրիլ ամիսների ընթացքում, սակայն սննդի տրամադրումը կատարվել է 2020 թվականի դեկտեմբեր և 2021 թվականի հունվար-ապրիլ ամիսների ընթացքում:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ սննդամթերքի մատակարարմամբ զբաղվող թվով 26 կազմակերպությունները ընտրվել են Զբոսաշրջության կոմիտեի կողմից՝ համատեղ հրամանի հիման վրա՝ մեկօրյա ժամկետում: 2020 թվականի ընթացքում կնքված պայմանագրերը շարունակվել են գործել նաև 2021 թվականի հունվար-ապրիլ ամիսների համար, 2021 թվականի ընթացքում կնքվել է ընդամենը թվով երեք պայմանագիր: Սննդամթերքի մատակարար կազմակերպության և բժշկական հաստատությունների կողմից կազմվել է ամփոփ հաշվարկի աղյուսակներ՝ մատակարարված և ընդունված սննդամթերքի վերաբերյալ, որը Զբոսաշրջության կոմիտեի կողմից կատարման արդյունքների վերաբերյալ դրական եզրակացություն ստանալուց հետո տրվել է Նախարարության ֆինանսական բաժին վճարում կատարելու համար:

Հաշվեքննության ընթացքում ՀՀ առողջապահության նախարարությունից ստացվել է տեղեկատվություն՝ բժշկական հաստատություններում նշված ժամանակաշրջանի համար բուժում ստացած պացիենտների, բուժանձնակազմի թվաքանակի և մատակարարներից ստացված սննդամթերքի չափաբաժինների վերաբերյալ, որը համեմատվել է 20.12.2020 – 30.04.2021թթ. ընկած

ժամանակահատվածում սննդամթերքի մատակարար կազմակերպությունների կողմից դուրս գրված հաշիվ-ապրանքագրերին կից ներկայացված տեղեկատվության հետ: Նախարարությունում կազմակերպված սույն Հաշվեքննության արձանագրության քննարկման ժամանակ ներկա է գտնվել նաև ՀՀ առողջապահության նախարարության պաշտոնատար անձը: Քննարկման արդյունքում հաշվեքննողներին ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրվել է լրացուցիչ տեղեկատվություն, որի արդյունքում առկա է անհամապատասխանություն կապված մատակարարների կողմից առաքված և թվով 9 բժշկական հաստատությունների կողմից ստացված սննդամթերքի չափաբաժինների հետ: Ըստ հաշիվ-ապրանքագրերին կից ամփոփ աղյուսակների մատակարարվել է 303,224 չափաբաժին սննդամթերք, սակայն ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն ստացվել է 287,627 չափաբաժին սննդամթերք կամ ավելին է մատակարարվել 15,597 չափաբաժին, գումարային արտահայտմամբ՝ 1,145.78 հազ.դրամ /459.88+685.90/: Հավելված 8 և 9-ով ներկայացվում են համեմատության արդյունքները: ***Առկա է շեղում բուժհաստատություններից բուժում ստացող պացիենտների, բուժանձնակազմի և ՀՀ էկոնոմիկայի նախարարության հաշիվ-ապրանքագրերին կից տեղեկատվությամբ ներկայացված թվաքանակների միջև: Առկա է խեղաթյուրում 1,145.78 հազ.դրամ գումարի չափով:***

***Հաշվեքննության օբյեկտի արձագանքը***

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը ներկայացված տեղեկատվությանը չի տիրապետում, պարզաբանում ստանալու նպատակով գրությամբ դիմել է ՀՀ առողջապահության նախարարություն: ՀՀ Հաշվեքննիչ պալատ արդեն տրամադրվել է ՀՀ առողջապահության նախարարությունից ստացված գրությունը Արձանագրության վերաբերյալ: Միաժամանակ տեղեկացվել է, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից կատարված վճարումների համար հիմք են հանդիսացել բացառապես ՀՀ առողջապահության նախարարության կողմից նշանակված պատասխանատուների կամ բժշկական հաստատությունների հաստատած հաշվետվությունները: Հաշիվ- ապրանքագրերը դուրս են գրված վերոնշյալ պատասխանատուների կամ բժշկական հաստատությունների կողմից հաստատված թվաքանակի չափաքանակներով:

ՀՀ առողջապահության նախարարության հետ աշխատանքային քննարկման արդյունքում ստացվել է տեղեկատվություն վերջինիս կողմից անճշտությունների մասով արդեն իսկ իրականացված համապատասխան քայլերի վերաբերյալ:

***Եզրակացություն***

ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվությունը հաշվի է առնվել հաշվեքննողների կողմից և համապատասխան հաշվարկների արդյունքում արձանագրվել է շեղում և խեղաթյուրում:

## 11.1058-11001 Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ ծրագրի շրջանակներում Նախարարության աշխատակիցների պարգևատրման վերաբերյալ

<u>*Կրկնվող կետ*</u>

***Առկա է խեղաթյուրում՝ 336,696.49 հազ.դրամ գումարի չափով կապված Նախարարության կողմից սխալ հոդվածի ներքո պարգևատրման ծախսերի ներկայացման հետ: Նշվածը չի համապատասխանում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007թ. հունվարի 9-ի «ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատված ՀՀ բյուջետային և հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» N 5 հրամանի հավելված 16-ի հետ:***

1058-11001 ծրագրի՝ «Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ» միջոցառման շրջանակում կատարվել են փաստացի ծախսեր 411100 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ», 411200 «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» և 411300 «Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում» հոդվածներով: Ստորև ներկայացված աղյուսակում նշված է այդ հոդվածների գծով աշխատակիցների հաշվարկված վճարները՝ տարանջատելով պարգևատրումները մնացած այլ վճարներից, որոնք ներկայացված են «Հիմնական աշխատավարձ» սյունակում՝

**Աղյուսակ 12, հազ.դրամ**

| Հոդվածի կոդ | Հոդվածի անվանում | Հիմնական աշխատավարձ | Պարգևատրում | Պարգևատրման տեսակարար կշիռը հիմնական աշխատավարձում |
|---|---|---|---|---|
| 4111 | Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | 1,167,962.50 | 336,696.49 | 28.8% |
| 4112 | Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ | - | 299,945.30 | 0% |
| 4113 | Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրում | - | 123,638.30 | 0% |

| Հոդվածի կոդ | Հոդվածի անվանում | Հիմնական աշխատավարձ | Պարգևատրում | Պարգևատրման տեսակարար կշիռը հիմնական աշխատավարձում |
|---|---|---|---|---|
| | Ընդամենը | 1,167,962,503.00 | 760,280.09 | 65 % |

Ինչպես պարզվում է 2021 թվականի ընթացքում ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակիցները պարգևատրվել են 336,696.49 հազ. դրամ գումարի չափով 411100 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով նախատեսված գումարի խնայողություններից: Նշված խնայողությունները առաջացել են 2021թ. ընթացքում նախարարության հաստիքացուցակով հաստատված թափուր պաշտոնները չհամալրելու արդյունքում:

***Առկա է խեղաթյուրում կապված Նախարարության կողմից ներկայացված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման հետ 336,696.49 հազ. դրամ գումարի չափով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված գումարը արտացոլված չէ որպես պարգևավճար, այլ ներառված է 411100 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածում:***

***Առկա է խեղաթյուրում կապված Նախարարության կողմից սխալ հոդվածի ներքո պարգևատրման ծախսերի ներկայացման հետ: Նշվածը չի համապատասխանում ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007թ. հունվարի 9-ի «ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատված ՀՀ բյուջետային և հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» N 5 հրամանի հավելված 16-ի հետ:***

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 9-րդ կետի համաձայն պետական ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող կամ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված համապատասխան լիազորություններով օժտված այլ պաշտոնատար անձը հատուկ առաջադրանքների և(կամ) որակյալ աշխատանքի կատարման համար պետական ծառայողներին կարող է պարգևատրել աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից և (կամ) օրենքով չարգելված այլ աղբյուրներից: Նույն հոդվածի 10-րդ կետով սահմանված է, որ աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից պետական ծառայողը հատուկ առաջադրանքների և (կամ) որակյալ աշխատանքի կատարման համար պարգևատրվում է իր մինչև մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով՝ անմիջական

ղեկավարի առաջարկությամբ կամ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված համապատասխան լիազորություններով օժտված պաշտոնատար անձի հայեցողությամբ:

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրելով պարգևատրումների տրամադրման ընթացակարգերը պարզվեց, որ աշխատակիցների որակյալ աշխատանքների կամ հատուկ առաջադրանքներ կատարելու վերաբերյալ հիմնավորումները բացակայում են: Ավելին, պարգևատրման գումարները հիմնական աշխատավարձի գումարների համեմատ կազմում են 20-194 %:

Նշենք նաև, որ առկա են դեպքեր, երբ աշխատակիցը ընդունվել է աշխատանքի և նույն ամսվա համար արդեն իսկ ստացել է պարգևատրում:

***Հաշվեքննության օբյեկտի արձագանքը***

ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը պարգևատրումը հաշվարկելիս առաջնորդվել է հիմք ընդունելով «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 9-րդ և 10-րդ մասերը:

Համաձայն վերոհիշյալ օրենքի 9-րդ մասի՝պետական ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող կամ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված համապատասխան լիազորություններով օժտված այլ պաշտոնատար անձը հատուկ առաջադրանքների և(կամ) որակյալ աշխատանքի կատարման համար պետական ծառայողներին կարող է պարգևատրել աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից և (կամ) օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

Համաձայն վերոհիշյալ օրենքի 10-րդ մասի՝ աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներից պետական ծառայողը հատուկ առաջադրանքների և (կամ) որակյալ աշխատանքի կատարման համար պարգևատրվում է իր մինչև մեկ ամսվա պաշտոնային դրույքաչափով՝ անմիջական ղեկավարի առաջարկությամբ կամ Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված համապատասխան լիազորություններով օժտված պաշտոնատար անձի հայեցողությամբ:

***Հաշվեքննողների մեկնաբանությունը***

«Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 10-րդ մասերով սահմանված դրույթը վերաբերվում է աշխատավարձի ֆոնդի տնտեսված միջոցներին, այլ ոչ թե 411100 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածին: Նշված հարաբերությունները կարգավորվում են ***ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007թ. հունվարի 9-ի N 5 հրամանի հավելված 16-ով:***

***Նշենք նաև, որ ֆինանսական հաշվետվության խեղաթյուրված լինելու և աշխատակիցների որակյալ աշխատանքների կամ հատուկ առաջադրանքներ կատարելու վերաբերյալ անմիջական ղեկավարների առաջարկությունների***

***բացակայության վերաբերյալ արձանագրված անհամապատասխանությունների վերաբերյալ հաշվեքննության օբյեկտի կողմից պարզաբանումներ չեն ներկայացվել:***

***Եզրակացություն***

2021թ. ընթացքում ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակիցները պարգևատրվել են 411100 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով նախատեսված գումարի խնայողություններից: Նշվածը հակասում է ***ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007թ. հունվարի 9-ի «ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատված ՀՀ բյուջետային և հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» N 5 հրամանի հավելված 16-ի պահանջներին: Առկա է խեղաթյուրում 336,696.49 հազ.դրամի չափով:***

# VI. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

## 12. Գյուղատնտեսության խթանման 1022 Ծրագրի՝ Գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում՝ 12001 միջոցառման շրջանակներում վարկառու տնտեսվարողներ սուբյեկտների կողմից վարկային միջոցների նպատակային օգտագործման վերաբերյալ

ՀՀ պետական բյուջեից Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագիրը (այս գլխում այսուհետ՝ Ծրագիր) ուղղված է ագրոպարենային ոլորտի զարգացման ծրագրերի վարկավորմանը: Մասնակիցներն են գյուղատնտեսական գործունեություն իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք (միասին՝ տնտեսվարողներ), առևտրային բանկերը կամ վարկային կազմակերպությունները (այս գլխում այսուհետ՝ ՖԿ), Նախարարությունը, Նախարարության «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ» պետական հիմնարկի Գյուղատնտեսական ֆինանսավորման կառույցը (այս գլխում այսուհետ՝ ԳՖԿ): Ծրագրի շահառուների ընտրության չափանիշներն են՝ ՀՀ գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներ ընտրված համաձայն՝ ՀՀ կառավարության 07.03.2019թ. թիվ 184-Լ որոշմամբ հաստատված Ծրագրի և ՖԿ-ների կողմից հաստատված համապատասխան չափանիշների:

Համաձայն «Ծրագրի միջոցառման գծով արդյունքային (կատարողական) ցուցանիշների վերաբերյալ» հաշվետվության /ձև Հ-8/, 01.01.2021թ.-31.12.2021թ. ժամանակահատվածի համար տարեկան պլանով նախատեսվել է սուբսիդավորել 7000 տնտեսվարողների՝ վարկառուների: Հաշվետու ժամանակաշրջանի (տարի) ճշտված պլանով այն կազմել է՝ 17000 վարկառու, իսկ փաստացի վարկառուների թիվը մեկ տարում կազմել է՝ 29487 տնտեսվարող: Հաշվետու ժամանակահատվածի վարկառուների փաստացի քանակի և ճշտված պլանի տարբերությունը կազմել է՝ 12487 ավել վարկառու: Վարկառուների թվի ավելացումը պայմանավորված է ծրագրի նկատմամբ պահանջարկի և վարկային փաթեթի ավելացմամբ, ինչպես նաև 0% տոկոսադրույքով տրամադրվող վարկերի առկայությամբ:

Համաձայն «Հիմնարկի կատարած բյուջետային ծախսերի և բյուջետային պարտքերի մասի» հաշվետվության /ձև Հ-2/, 01.01.2021թ.-31.12.2021թ. ժամանակահատվածի համար ՀՀ պետական բյուջեի տարեկան ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 9,763,922.70 հազ. դրամ: 2021 թվականի հաշվետու ժամանակաշրջանի (տարի) դրամարկղային ծախսը կազմել է՝ 9,763,922.60 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը կազմել է՝ 10,604,236.40 հազ. դրամ, այսինքն՝ փաստացի ծախսի և դրամարկղային ծախսի տարբերությունը կազմել է՝ 840,313.80 հազ. դրամ, որը համաձայն «Հիմնարկի դեբիտորական, կրեդիտորական պարտքերի և պահեստավորված միջոցների մասի» հաշվետվության /ձև Հ-4/, 01.01.2021թ.-31.12.2021թ. ժամանակահատվածի համար ձևակերպվել է որպես տարեվերջի կրեդիտորական պարտք:

## 13. Գյուղատնտեսության խթանման 1022 Ծրագրի՝ Գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում՝ 12001 միջոցառման շրջանակներում վարկառու տնտեսվարողների կողմից պայմանագրով նախատեսված վարկային միջոցների օգտագործման ուղղության մասնակի փոփոխության և ինքնակամ կառուցված շինությունների վերաբերյալ

Վարկերի նպատակային օգտագործման մոնիթորինգի հսկողության գործընթացի արդյունավետությունը ստուգելու համար, Արագածոտնի մարզի համայնքներից ընտրված 60 վարկառուների կողմից վարկերի նպատակային օգտագործման վերաբերյալ ՀՀ հաշվեքննիչ պալատը նամակով դիմել է Նախարարությանը, որպեսզի վերջինս տրամադրի «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի» շրջանակներում, ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 7-ի N 184-L որոշման «Ծրագրի մոնիթորինգը» բաժնի 20-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ ՖԿ-ների կողմից իրականացված նպատակային մոնիթորինգի արդյունքների մասին տեղեկատվություն: **Նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն բոլոր 60 վարկառուների մոտ նպատակային մոնիթորինգի արդյունքները դրական էին:**

Հաշվեքննողների կողմից, վարկային միջոցների օգտագործման նպատակայնությունը ստուգելու նպատակով, սուբսիդավորման Ծրագրի վարկային

փաթեթից կազմվել է վիճակագրական ընտրանք: Ընտրանքում ներառված վարկառու տնտեսվարողներին կատարվել է այցելություն և ուսումնասիրվել են ստացված վարկային միջոցների օգտագործման նպատակայնությունը և համապատասխանությունը ՖԿ-ների կողմից իրականացված նպատակային մոնիթորինգի արդյունքներին: Ընտրանքում ներառվել են Արագածոտնի մարզի համայնքներում գործող 42 վարկառուները, որոնց գծով իրականացված ընթացակարգերի արդյունքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվում է Հավելված 10-ում:

Ընտրանքում ներկայացված տնտեսվարողներից աշխատանքային փաստաթղթի (այսուհետ հարցաթերթ) միջոցով ստացված հաստատումների վերլուծության և համայնքների անասնագլխաքանակների հաշվառման մատյանների տվյալների համադրումից պարզվել է, որ.

Ընտրված վարկառուներից 9-ը ունեին վարկի օգտագործման ուղղության մասնակի փոփոխություն: Այսպես՝

- Նոր Արթիկ համայնքի բնակիչ Վ.Ս.-ն «Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ից «խոշոր եղջերավոր կենդանիների բուծման» և «բուսաբուծության» նպատակով ստացված 11,000.00 հազ. դրամի վարկի գումարից, հարցաթերթի համաձայն 7,500.00 հազ.դրամը օգտագործել է անասնագոմի (ինքնակամ) կառուցման և բեռնատար գնելու համար, և 2,500.00 հազ դրամով գնել է ընդամենը 10 գլուխ խոշոր եղջերավոր կենդանի:
- Թալին համայնքի բնակիչ Գ.Յ.-ն «Կամուրջ» ՈՒՎԿ -ից «անասնապահության» նպատակով ստացված 10,000.00 հազ. դրամի վարկի գումարից, հարցաթերթի համաձայն 6,000.00 հազ. դրամը օգտագործել է անասնագոմի (ինքնակամ) կառուցման համար և 4,000.00 հազ. դրամով գնել է ընդամենը 18 գլուխ խոշոր եղջերավոր կենդանի:
- Իրինդ համայնքի բնակիչ Մ.Ա.-ն «Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ից «խոզաբուծության» նպատակով ստացված 19,000.00 հազ. դրամի վարկի գումարից 11,500.00 հազ. դրամը, հարցաթերթի համաձայն օգտագործել է անասնագոմի (ինքնակամ) կառուցման, ծնարանի և անասնակերի ձեռքբերման համար:
- Ապարան համայնքի բնակիչ Վ.Է.-ն «Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ից «խոշոր եղջերավոր կենդանիների բուծման» նպատակով ստացված 11,000.00 հազ. դրամի վարկի գումարը, հարցաթերթի համաձայն, օգտագործել է հիմնականում անասնագոմի վերակառուցման (ինքնակամ), ծածկի կառուցման ու անասնակերի գնման համար: Ընդամենը 3,000.00 հազ.դրամով ձեռք է բերել 6 գլուխ խոշոր եղջերավոր կենդանի և 7 գլուխ խոզ:
- Ապարան համայնքի բնակիչ Ս.Ս-ն «Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ից «ոչխարաբուծության» և «խոշոր եղջերավոր կենդանիների բուծման» նպատակով

ստացված ընդհանուր 21,050.00 հազ. դրամի վարկի գումարից 15,000.00 հազ. դրամը, հարցաթերթի համաձայն օգտագործել է անասնագոմի (ինքնակամ) և սպանդանոցի (ինքնակամ) կառուցման համար:

- Վերին Սասնաշեն համայնքի բնակիչ Մ.Գ.-ն «Քարդ» ՈՒՎԿ-ից «Անասնաբուծության» նպատակով ստացված 18,000.00 վարկի գումարը, հարցաթերթի համաձայն օգտագործել է 300 գլուխ ոչխար ձեռք բերելու նպատակով, այնուհետև 270 գլուխ ոչխարի վաճառքի գումարով հիմնել է 3հա այգի:
- Արագածավան համայնքի բնակիչ Ս.Ա-ն «Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ից «խոշոր եղջերավոր կենդանիների բուծման» նպատակով ստացված ընդհանուր 27,300.00 հազ. դրամի վարկի գումարը, հարցաթերթի համաձայն ամբողջովին օգտագործել է սպանդանոցի կառուցման համար:
- Վարդենուտ համայնքի բնակիչ Ս.Ա.-ն «Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ից «խոշոր եղջերավոր կենդանիների բուծման» նպատակով ստացված 15,000.00 հազ.դրամ վարկի գումարը, հարցաթերթի համաձայն օգտագործել է հիմնականում անասնագոմի (ինքնակամ) կառուցման, կթի ապարատի և կերաղացի ձեռքբերման համար և 6,000.00 հազ. դրամով ընդամենը ձեռք է բերել 20 գլուխ խոշոր եղջերավոր կենդանի:
- Աշտարակ համայնքի բնակիչ Է.Վ.-ն «Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ից «խոշոր եղջերավոր կենդանիների բուծման» նպատակով ստացված 12,000.00 հազ.դրամ վարկի գումարից 8,000.00 հազ. դրամը, հարցաթերթի համաձայն օգտագործել է ձկնաբուծության նպատակով ջրավազանի կառուցման, անասնակերի ձեռքբերման և այլ ընթացիկ ծախսերի համար և 1,300.00 հազ. դրամի չափով առկա է վարկի մնացորդ:

Ընտրված վարկառուների կողմից հարցաթերթի միջոցով տրամադրված տեղեկատվության համաձայն, ընտրանքում ներկայացված տնտեսվարողներից 6 –ի մոտ կառուցված շինությունները /անասնագոմերը/ հանդիսանում են ինքնակամ կառույց և շինարարության թույլտվություններ առկա չեն, որի հետևանքով անհնար է դառնում հստակ որոշելու ապօրինի շինությունների կառուցման ժամանակահատվածը:

Արդյունքում, վարկառուները ստացված վարկերը օգտագործել են հիմնականում գյուղատնտեսության մեջ, սակայն վարկի ձևակերպման ժամանակ վարկի օգտագործման ընտրված ոլորտը հետագայում որոշ դեպքերում չի համապատասխանում փաստացի կատարված աշխատանքների ուղղությունների հետ: Նախարարության կողմից վարկերի նպատակային օգտագործման վերաբերյալ հսկողական գործընթացները արդյունավետ չեն և ամբողջությամբ չեն արտացոլում վարկերի օգտագործման ուղղության իրական պատկերը:

***Հաշվեքննության օբյեկտի արձագանքը***

Թվով 9 վարկառուների հետ կապված, որոնք ունեն վարկի օգտագործման ուղղության փոփոխություն, հայտնում ենք, որ 2019 թվականի մարտի 7-ի N 184-Լ որոշման 16-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն վարկը համարվում է ոչ նպատակային, եթե օգտագործվել է ագրոպարենային ոլորտում չընդգրկվող բնագավառներում, իսկ ագրոպարենային ոլորտում ընդգրկվող բնագավառներում վարկի օգտագործման ուղղության փոփոխությունը չի դիտարկվում վարկի ոչ նպատակային օգտագործում, և անհամապատասխանություն ծրագրի 20-րդ կետի 3-րդ ենթակետի պահանջների հետ առկա չէ:

Թվով 6 վարկառուների մոտ ինքնակամ կառուցված շինությունների (անասնաշենքերի) հետ կապված հայտնում ենք, որ այս դեպքում նույնպես անհամապատասխանություն առկա չէ, հաշվի առնելով, որ նշված շինությունները առկա են, և ապօրինի շինությունների կառուցման ժամանակաշրջանի անորոշ լինելը չի ենթադրում, որ դրանք չեն կառուցվել տրամադրված վարկային միջոցներով:

***Հաշվեքննողների մեկնաբանությունը***

Հաշվեքննության օբյեկտի կողմից ներկայացված արձագանքը հաշվեքննողների կողմից ընդունելի չէ, քանի որ, նշված 9 վարկառուների մասով արձանագրվել է վարկի օգտագործման ուղղության մասնակի փոփոխություն, իսկ 6 վարկառուների կողմից ինքնակամ կառուցված շինությունների (անասնաշենքերի) կառուցման ժամանակաշրջանի անորոշ լինելը չի ենթադրում նաև, որ դրանք կառուցվել են տրամադրված վարկային միջոցներով: Նշված դեպքերը չեն դիտարկվել որպես վարկառուների կողմից վարկի ոչ նպատակային օգտագործում:

## 14. Գյուղատնտեսության խթանման 1022 Ծրագրի՝ Գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում՝ 12001 միջոցառման շրջանակներում վարկառուների կողմից գյուղատնտեսության ոլորտում գործունեության դադարեցման վերաբերյալ

Հաշվեքննողների կողմից, վարկային միջոցների օգտագործման նպատակայնությունը ստուգելու նպատակով, սուբսիդավորման Ծրագրի վարկային փաթեթից կազմված վիճակագրական ընտրանքում ներկայացված տնտեսվարողներից հարցաթերթի միջոցով ստացված հաստատումների վերլուծության և համայնքների անասնագլխաքանակների հաշվառման մատյանների տվյալների համադրումից պարզվել է, որ.

Ընտրված վարկառուներից երկուսը վարկի սուբսիդավորման ժամանակահատվածում դադարեցրել են գյուղատնտեսական գործունեությունը: Այսպես՝

- Արագածոտն համայնքում գործունեություն իրականացնող Գ.Ս.-ն «Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ից 16.05.2019թ. «Խոզաբուծության» նպատակով

ստացված 15,000.00 վարկի գումարից 12,000.00 հազ. դրամը հարցաթերթի համաձայն օգտագործել է անասնագոմի կառուցման համար, մնացած գումարին ձեռք է բերել 28 գլուխ խոզ: Համաձայն հարցաթերթի և վարչական ղեկավարի կողմից տրամադրված տեղեկատվության, 2020 թվականի ընթացքում Գ.Ս.-ն վաճառել է անասնագոմը և անասնագլխաքանակը, որից հետո մինչ օրս չի զբաղվում խոզաբուծությամբ: Սակայն վարկի տոկոսագումարի սուբսիդավորումը 2021 թվականին շարունակվել է և այն կազմել է՝ 656.80 հազ. դրամ:

- Կարբի համայնքում գործունեություն իրականացնող Խ.Ս.-ն «Ակբա Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ից 29.12.2020 թվականին «խոշոր եղջերավոր կենդանիների բուծման» նպատակով ստացված 45,000.00 հազ.դրամ վարկի գումարից, հարցաթերթի համաձայն 32,000.00 հազ. դրամով ձեռք է բերել 60 գլուխ խոշոր եղջերավոր կենդանի, 8,000.00 հազ. դրամի գնել է անասնակեր, իսկ մնացածը օգտագործել է տեխնիկական միջոցների ձեռքբերման և ընթացիկ ծախսերի համար: Համաձայն հարցաթերթի և վարչական ղեկավարի կողմից տրամադրված տեղեկատվության, 2021 թվականի ընթացքում Խ.Ս.-ն ամբողջությամբ վաճառել է անասնագլխաքանակը, որից հետո մինչ օրս չի զբաղվում անասնապահությամբ: Սակայն վարկի տոկոսագումարի սուբսիդավորումը 2022 թվականին շարունակվում է:

Արդյունքում՝ ՀՀ պետական բյուջեից շարունակվում է վարկի սուբսիդավորումը նաև այն դեպքում, երբ տնտեսվարողները դադարեցրել են գյուղատնտեսությամբ զբաղվելը: Վերը նշված ռիսկերը բացառելու նպատակով անհրաժեշտ է Ծրագրում սահմանել վարկի սուբսիդավորման ժամանակահատվածում վարկային միջոցներով կառուցված կամ ձեռքբերված գույքի հետագա օտարումը սահմանափակող դրույթներ, որոնք կապահովեն գյուղատնտեսական գործունեության շարունակականությունը:

***Հաշվեքննության օբյեկտի արձագանքը***

Թվով 2 վարկառուների վերաբերյալ, որոնց վարկը դասակարգվել է «Հիմնականում ոչ նպատակային օգտագործված», հայտնում ենք, որ հաշվեքննությամբ արձանագրվել է, որ վարկառուները տրամադրված վարկային միջոցներով ձեռք են բերել անասնագլխաքանակ և կառուցել անասնագոմ, այսինքն՝ վարկային միջոցները օգտագործվել են նպատակային: Ինչ վերաբերում է վարկառուների կողմից հետագայում գլխաքանակի և անասնաշենքի օտարմանը, ապա դա հիմք չէ վարկը ոչ նպատակային դասակարգելու և սուբսիդավորումը դադարեցնելու համար, քանի որ ծրագրում վարկային միջոցներով կառուցված կամ ձեռք բերված գույքի հետագա օտարումը սահմանափակող դրույթներ առկա չեն: Արդյունքում, վարկային միջոցների օգտագործման անհամապատասխանության և խեղաթյուրման վերաբերյալ եզրահանգումները հիմնավոր չեն:

Միաժամանակ հայտնում ենք, որ Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի շրջանակում տրամադրված վարկերի նպատակային օգտագործման մակարդակը բարձրացնելու նպատակով ՀՀ կառավարության 2022 թվականի հունվարի 27-ին N 103-Լ որոշմամբ ծրագրում կատարվել են փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն որոնց ծրագրում հստակ սահմանվել են նպատակային ուղղություններ:

***Հաշվեքննողների մեկնաբանությունը***

Հարկ է նշել, որ Ծրագրում ՀՀ կառավարության 27.01.2022 թվականի N 103-Լ որոշմամբ կատարված փոփոխությունները և լրացումները հստակեցնում են վարկի օգտագործման նպատակային ուղղությունները, սակայն անհրաժեշտ է, նաև Ծրագրում սահմանել վարկի սուբսիդավորման ժամանակահատվածում գյուղատնտեսական գործունեության շարունակականությունը ապահովող դրույթ:

## 15. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման վերաբերյալ

***Կրկնվող կետ***

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2021 թվականի տարեկան կատարման վերաբերյալ հաշվետվության՝ 1116 Ծրագրի 11001 միջոցառման շրջանակներում ճշտված պլանով նախատեսվել է հատկացնել 1,471,775.10 հազ. դրամ, դրամարկղային ծախսը կազմել է 1,457,719.07 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 1,519,075.78 հազ. դրամ /դրամարկղային և փաստացի ծախսի տարբերությունը պայմանավորված է պահեստում առկա պատվաստանյութի ծախսի հետ/:

Ծրագիրն իրականացվում է երկու բաղադրիչներով՝

3. 4266 - Առողջապահական և լաբորատոր նյութեր տնտեսագիտական հոդվածով՝ Կանխարգելիչ, ախտորոշիչ և ախտահանիչ միջոցների, ինչպես նաև անասնաբուժական պարագաների ձեռքբերում,
4. 4637 - Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին տնտեսագիտական հոդվածով՝ Հակահամաճարակային միջոցառումների իրականացում:

Ծրագրի առաջին բաղադրիչի իրականացման համար Նախարարության կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով կատարվում է կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցների ձեռքբերում, որը ի պահ է հանձնվում ՀԱԲԼԾԿ-ին, հետագայում տրամադրվում է ԳԾԿ-ին՝ 1116 Ծրագրի 11001 միջոցառման երկրորդ բաղադրիչի իրականացման համար:

***Ձեռքբերված առողջապահական և լաբորատոր նյութերի վերաբերյալ***

Միջոցառման շրջանակներում 2021 թվականի ընթացքում 4266 տնտեսագիտական հոդվածով՝ տարեկան ճշտված պլանով նախատեսվել է ձեռքբերել 369,944.00 հազ. դրամի առողջապահական և լաբորատոր նյութեր: Դրամարկղային ծախսը կազմել է 367,087.98 հազ.դրամ, փաստացի ծախսը կազմել է 431,493.16 հազ.դրամ /դրամարկղային և փաստացի ծախսի տարբերությունը պայմանավորված է պահեստում առկա պատվաստանյութի ծախսի հետ/:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ 2021 թվականի ընթացքում ձեռք է բերվել Դաբաղ և Ծաղիկ պատվաստանյութեր ընդհանուր գումարով՝ 326,455.80 հազ. դրամի, որը կազմում է ընդհանուր ձեռքբերված պատվաստանյութի 89 տոկոսը:

***<u>Դաբաղ պատվաստանյութի ձեռքբերման վերաբերյալ</u>***

2021 թվականի հունվարի 29-ին Նախարարությունը՝ Դաբաղ պատվաստանյութի ձեռքբերման նպատակով, կազմակերպել է ՀՀ ԷՆ-ԲՄԱՊՁԲ-21/04 ծածկագրով գնման ընթացակարգ՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ՝ ԳՄ Օրենք/ 15-րդ հոդվածի, 6-րդ մասի համաձայն: Նախահաշվային գին է սահմանվել 247,293.87 հազ. դրամ, 3,410 950 մլ պատվաստանյութի համար, որի մեկ միավորի արժեքը կազմել է 72.5 դրամ: Մրցույթին մասնակցել է «Ինովատոր» ՍՊԸ-ն, որի ներկայացրած գնային առաջարկը կազմել է 346,211.46 հազ. դրամ /ներառյալ ԱԱՀ-ն/, որը գերազանցել է բյուջեով նախատեսված գինը: Արդյունքում, գնման ընթացակարգը համարվել է չկայացած:

Նախարարությունը հիմնավորմամբ դիմել է ՀՀ Կառավարությանը՝ Դաբաղ և Ծաղիկ պատվաստանյութերի գնման նպատակով հրատապության հիմքով մեկ անձից գնում կատարելու և լրացուցիչ գումար պահանջելու համար: Նախարարությունը, որպես հրատապության անհրաժեշտություն ներկայացրել է ժամկետի սղությունը: Նախարարության կողմից հիմնավորման մեջ ներկայացվել է նաև լրացուցիչ գումարի պահանջ՝ կապված Արցախի Հանրապետությունից շուրջ 10,000 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիների ՀՀ ներմուծման հետ, ինչպես նաև համապատասխան գնի մեջ ԱԱՀ-ի գումար չնախատեսելու հետ, որը հետևանք է «Կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից ներմուծվող՝ ակցիզային հարկով հարկման ոչ ենթակա այն ապրանքների ցանկը հաստատելու մասին, որոնց ներմուծումն ազատված է ավելացված արժեքի հարկից» ՀՀ օրենքում /այսուհետ՝ ՀՕ-195 օրենք/ կատարված փոփոխության: Հարկ է նշել, որ ՀՕ-195-ի փոփոխությունը կատարվել է 2019թ.-ի հունիսի 25-ին և ուժի մեջ է մտել 2020 թվականի հունվարի 1-ից, որի մասին Նախարարությանը լրացուցիչ տեղեկացվել է նաև ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից դեռևս 2020 թվականի մայիս ամսին:

Պետք է նշել, որ դեռևս 2021 թվականի մարտի 19-ի թիվ 16-01/2318 գրությամբ «Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖԲՊԿ-ն, Նախարարության հարցմանը ի պատասխան, պատրաստակամություն է հայտնել ուղիղ գնման ձևով մատակարարել վերը նշված պատվաստանյութը, և ներկայացրել գնային առաջարկ՝ 1 մլ Դաբաղ պատվաստանյութի համար առաջարկել է 71,25 դրամ /2020 թվականին առաջարկված գնին հավասար: Ընդհանուր գինը 3,410,950 մլ

պատվաստանյութի համար կազմել է 291,636.22 հազ. դրամ, որից ԱԱՀ-ն կազմում է 48,615.75 հազ. դրամ:

Սակայն հիմնավորմամբ Նախարարությունը չի ներկայացրել, որ ՌԴ «Կենդանիների առողջության պաշտպանության դաշնային կենտրոն» ՖԲՊԿ-ն պատրաստակամություն է հայտնել Դաբաղ պատվաստանյութը մատակարարել ուղիղ գնման ձևով:

Այսպիսով, «Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖԲՊԿ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը սահմանված քանակի պատվաստանյութի ձեռքբերման պայմաններով համապատասխանում է պետական բյուջեով Դաբաղ պատվաստանյութի ձեռքբերման համար նախատեսված ֆինանսական միջոցներին:

Արդյունքում, ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 26-ի N 648-Ն որոշմամբ Նախարարությանը թույլատրվել է Դաբաղ և Ծաղիկ պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով իրականացնել հրատապության հիմքով մեկ անձից գնում և հատկացվել է 50,308,72 հազ. դրամ լրացուցիչ գումար:

Նախարարությունը 2021 թվականի ապրիլի 28-ին կազմակերպել է ՀՀ ԷՆ-ՀՄԱԱՊՁԲ-21-35 ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգ՝ Դաբաղ և Ծաղիկ պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով: Դաբաղ պատվաստանյութի նախահաշվային գին է սահմանվել 291,636.22 հազ. դրամ:

Դաբաղի մասով գնային առաջարկ է ներկայացրել միայն «Ինովատոր» ՍՊԸ-ն՝ 346,211.46 հազ. դրամ /ներառյալ ԱԱՀ-ն/, որը գերազանցել է նախատեսված ֆինանսական միջոցները: Արդյունքում, գնման ընթացակարգը Դաբաղի մասով համարվել է չկայացած:

Սակայն Նախարարությունը հաշվի չառնելով վերոգրյալը կրկին դիմել է ՀՀ Կառավարությանը հիմնավորմամբ՝ Դաբաղ պատվաստանյութի գնման նպատակով մեկ անձից՝ «Ինովատոր» ՍՊԸ-ից գնում կատարելու և պատվաստանյութի քանակը կրճատելու համար՝ միաժամանակ անփոփոխ թողնելով նախատեսված ֆինանսական միջոցները: Այսպիսով, Նախարարությունը, ՀՀ ԷՆ-ՀՄԱԱՊՁԲ-21-35 ծածկագրով գնման ընթացակարգից հետո, գնային առաջարկ ստանալու հիմքով ևս երկու անգամ դիմել է «Ինովատոր» ՍՊԸ-ին ստանալով նոր գնային առաջարկ՝ 3,410,950մլ Դաբաղ պատվաստանյութի համար 330,357,36 հազ. դրամ /ներառյալ ԱԱՀ-ն/ և միավորի գին՝ 96,8 դրամ /ներառյալ ԱԱՀ-ն/: Արդյունքում, Նախարարությունը հիմնավորման մեջ ներկայացրել է միայն «Ինովատոր» ՍՊԸ-ի գնային առաջարկը և պատճառաբանելով, որ «վերահաշվարկի արդյունքները կբավարարեն ապահովել կայուն անասնահամաճարակին իրավիճակ՝ առաջարկել է ՀՀ կառավարությանը ձեռք բերել 3,410,950 մլ-ի փոխարեն 3,012,770 մլ Դաբաղի

պատվաստանյութ՝ միաժամանակ նշելով, որ լրացուցիչ չափաքանակի ձեռքբերման անհրաժեշտության դեպքում կներկայացվի որոշման նոր նախագիծ: Նախարարության հիմնավորման հիման վրա ՀՀ կառավարության կողմից 2021 թվականի մայիսի 13-ին ընդունվել է N 791-Ն որոշումը:

2021 թվականի մայիսի 31-ին Նախարարությունը «Ինովատոր» ՍՊԸ–ի հետ կնքել է ՀՀ ԷՆ-ՀՄԱԱՊՁԲ-21-39-187-21 ծածկագրով պայմանագիրը՝ 291,636.13 հազ. դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: «Ինովատոր» ՍՊԸ–ն ձեռքբերված 3,012,770 մլ Դաբաղ պատվաստանյութը մատակարարել է 15.06.2021 թվականին: Այսպիսով, ձեռքբերված Դաբաղ պատվաստանյութի միավորի գինը՝ առանց ԱԱՀ, կազմել է 80,66 դրամ, որը 9,41 դրամով գերազանցում է նախորդ տարվա միավորի գինը: Ընդ որում, հարկ է նշել, որ 2020 թվականին պատվաստանյութը գնվել է արտադրող կազմակերպությունից, իսկ 2021 թվականին՝ միջնորդ կազմակերպությունից: Այսինքն՝ 2021 թվականին Դաբաղ պատվաստանյութը 2020 թվականի համեմատ ձեռք է բերվել, ընդհանուր առմամբ, 34,020.19 հազ. դրամ, ներառյալ ԱԱՀ-ն / (9,41*3,012,770)+20%/ ավելի թանկ գնով: Հաշվեքննությամբ պարզվել է, որ միջնորդ կազմակերպությունը՝ «Ինովատոր» ՍՊԸ-ն, Դաբաղ պատվաստանյութը ձեռք է բերել ՌԴ «Շչոլկովոյի բիոկոմբինատ» ԴՊՁ-ից, որի համար վճարվել է 388,651.20 ԱՄՆ դոլար, 1 մլ-0,129 ԱՄՆ դոլարին համարժեք 63,21 դրամ, /1 ԱՄՆ դոլար - 490 դրամ/, կամ Նախարարությանը հանձնված նույն պատվաստանյութի միավորի գնի և «Ինովատոր» ՍՊԸ–ի կողմից ձեռքբերման գնի տարբերությունը կազմում է 20,94 դրամ /ներառյալ ԱԱՀ/, ընդհանուր քանակի համար տարբերությունը կազմում է 63,099.84 հազ. դրամ, որից ԱԱՀ-ն՝ 10,518.74 հազ.դրամ:

Ներքոնշյալ աղյուսակում ներկայացվում է 2019-2021թթ.-ի ընթացքում Դաբաղ պատվաստանյութերի ձեռքբերումը՝ ըստ տարիների, ձեռքբերման գների և քանակների:

**2019-2021 թթ. ընթացքում 1116 Ծրագրի 11001 միջոցառման շրջանակներում մեկ անձից Դաբաղ պատվաստանյութի գնման վերաբերյալ**

Աղյուսակ 13

| Հ/Հ | Պատվաստանյութի անվանումը | Ձեռքբերման տարեթիվը | Մատակից կազմակերպության անվանումը | Միավորի գինը/դրամ/ | | Քանակը /մլ/ | Գումարը այդ թվում՝ ԱԱՀ-ն /հազ.դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | առանց ԱԱՀ | Այդ թվում ԱԱՀ | | |
| 1 | Դաբաղ | **2019** | «Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖՊԲԿ | 70.5 | | 4,061,900 | 292,146.08 |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | **2020** | «Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖՊԲԿ | 71.25 | 85.5 | 3,121,000 | 266,845.50 |
| | | **2021** | «Ինովատոր» ՍՊԸ | 80.66 | 96.8 | 3,012,770 | 291,636.10 |

***<u>Ծաղիկ պատվաստանյութի ձեռքբերման վերաբերյալ</u>***

2021 թվականի փետրվարի 3-ին Նախարարությունը՝ Ծաղիկ պատվաստանյութի ձեռքբերման նպատակով, կազմակերպել է ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-21/05 ծածկագրով գնման ընթացակարգ՝ ԳՄ Օրենքի 15-րդ հոդվածի, 6-րդ մասի 2-րդ կետի համաձայն: Նախահաշվային գին է սահմանվել 29,831.87 հազ. դրամ, 2,386, 550 մլ պատվաստանյութի համար, որի մեկ միավորի արժեքը կազմել է 12.5 դրամ: Մրցույթին մասնակցել է «Կենդանիների առողջության պահպանման դաշնային կենտրոն» ՖԲՊԿ-ն, որի ներկայացած գնային առաջարկը կազմել է 35,798.25 հազ. դրամ /ներառյալ ԱԱՀ-ն/, որը գերազանցել է բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցները: Արդյունքում, գնման ընթացակարգը համարվել է չկայացած: Այնուհետև, Նախարարությունը Ծաղիկ պատվաստանյութի ձեռքբերման նպատակով 2021թ.-ի մարտի 10-ին հայտարարել է ևս մեկ մրցույթ՝ ՀՀ ԷՆ-ԳՀԱՊՁԲ-21/05/1 ծածկագրով: Մրցույթին մասնակցել է «ԷՖ ԲԻ ԷՅ» ՍՊԸ-ն, որի գնային առաջարկը կազմել է 35,559.59 հազ. դրամ՝ գերազանցելով բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցները: Արդյունքում, գնման ընթացակարգը համարվել է չկայացած:

Նախարարությունը 2021 թվականի ապրիլի 28-ին կազմակերպել է ՀՀ ԷՆ-ՀՄԱԱՊՁԲ-21-35 ծածկագրով մեկ անձից գնման ընթացակարգ՝ Դաբաղ և Ծաղիկ պատվաստանյութերի ձեռքբերման նպատակով: Ծաղիկ պատվաստանյութի նախահաշվային գին է սահմանվել 35,798. 25 հազ. դրամ:

Ծաղիկ պատվաստանյութի մասով գնային առաջարկներ են ներկայացրել «Սոնետ» ՍՊԸ-ն՝ 51,549.48 հազ. դրամ /ներառյալ ԱԱՀ-ն/ և «ԷՖ ԲԻ ԷՅ» ՍՊԸ-ն՝ 34,819.76 հազ. դրամ /ներառյալ ԱԱՀ-ն/: Արդյունքում, հաղթող է ճանաչվել «ԷՖ ԲԻ ԷՅ» ՍՊԸ-ն, որի հետ կնքվել է պայմանագիր:

**2019-2021 թթ. ընթացքում 1116 Ծրագրի 11001 միջոցառման շրջանակներում մեկ անձից Ծաղիկ պատվաստանյութի գնման վերաբերյալ**

Աղյուսակ 14

| Հ/Հ | Պատվաստանյութի անվանումը | Ձեռքբերման տարեթիվը | Մասնակից կազմակերպության անվանումը | Միավորի գինը/դրամ/ | | Քանակը /մլ/ | Գումարը այդ թվում՝ ԱԱՀ-ն /հազ.դրամ/ |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | առանց ԱԱՀ | Այդ թվում ԱԱՀ | | |
| 1 | Ծաղիկ | 2019 | «Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖՊԲԿ | 12.5 | | 2,457,450 | 30,718.13 |
| | | 2020 | «Կենդանիների առողջության պահպանման ֆեդերալ կենտրոն» ՖՊԲԿ | 12.5 | 15 | 3,618,850 | 54,282.70 |
| | | 2021 | «ԷՖ ԲԻ ԷՅ» ՍԸ | 12.16 | 14.59 | 2,386,550 | 34,819.70 |

**Այսպիսով, Նախարարության կողմից Դաբաղ և Ծաղիկ պատվաստանյութերի ձեռքբերման գործընթացում առկա են պլանային և կատարողական ցուցանիշների միջև շեղումներ և հսկողական գործընթացի թերացումներ: Վերոնշյալը հանգեցրել է 2019-2021թթ. ընթացքում նշված պատվաստանյութերի հրատապության հիմքով մեկ անձից գնմանը, պատվաստանյութերի ուշ մատակարարմանը և արդյունքում 2021 թվականի հուլիսի 1-ի դրությամբ Դաբաղ պատվաստանյութի գծով 326,087 հատ /652,174 մլ/ պակաս հակադաբաղային միջոցառման իրականացմանը: 2021 թվականին Դաբաղ պատվաստանյութը մեկ անձից՝ միջնորդ կազմակերպությունից գնելու հետևանքով, Նախարարությանը մատակարարված ապրանքի գինը գերազանցել է արտադրող կազմակերպության վաճառքի գնին, որը կազմել է 63,099.84 հազ. դրամ:**

Ուսումնասիրության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել Անասնաբուժական ծառայություններ ծրագրի շրջանակներում արտաքին հաստատման ընթացակարգով Պետական եկամուտների կոմիտեից տեղեկատվություն ստանալ մատակարարված Ծաղիկ պատվաստանյութի վերաբերյալ: Սակայն հարցմանն ի պատասխան Հաշվեքննիչ պալատին պահանջվող տեղեկատվությունը չի տրամադրվել, պատճառաբանելով, որ այն հարկային գաղտնիք է հանդիսանում:

**2019-2021թթ. ընթացքում, Նախարարության կողմից Դաբաղ և Ծաղիկ պատվաստանյութերի ձեռքբերման վերլուծությունից պարզվել է, որ նշված տարիներին պատվաստանյութերը գնվել են մեկ անձից: Մասնավորապես նշված ժամանակահատվածում հրատապության հիմքով մեկ անձից ձեռքբերումների**

պատճառ են հանդիսացել մասնակիցների կողմից ներկայացված նախահաշվային գնից բարձր գնային առաջարկները, որոնք, ըստ էության, ներառել են պատվաստանյութի արժեքից բացի նաև ԱԱՀ-ի գումարը, որը չի նախատեսել և հաշվի չի առել Նախարարությունը: Հետևաբար, չկայացած մրցույթները և հետագայում համապատասխան որոշումների կայացումը հանգեցրել է պատվաստանյութերի ձեռքբերման ժամկետների երկարաձգման և մեկ անձից գնման հրատապության՝ կապված անասնահամաճարակային իրավիճակի կայունության ապահովման հետ: Հարկ է նշել, որ կազմակերպված մրցույթներին հիմնականում մասնակցել են այն կազմակերպությունները, որոնց հետ կնքվել է մեկ անձից գնման պայմանագրեր:

***2021 թվականի ինն ամիսների հաշվեքննության արդյունքները Դաբաղ և Ծաղիկ պատվաստանյութերի ձեռքբերման մասով ուղարկվել են ՀՀ գլխավոր դատախազություն: Առ 08.04.2022թ. դրությամբ ՀՀ գլխավոր դատախազությունից տեղեկատվություն չի ստացվել գործի ընթացքի վերաբերյալ:***

***Եզրակացություն***

2019-2021թթ. ընթացքում, Նախարարության կողմից Դաբաղ և Ծաղիկ պատվաստանյութերի ձեռքբերման վերլուծությունից պարզվել է, որ նշված տարիներին պատվաստանյութերը գնվել են մեկ անձից: Մասնավորապես նշված ժամանակահատվածում հրատապության հիմքով մեկ անձից ձեռքբերումների պատճառ են հանդիսացել մասնակիցների կողմից ներկայացված նախահաշվային գնից բարձր գնային առաջարկները, որոնք, ըստ էության, ներառել են պատվաստանյութի արժեքից բացի նաև ԱԱՀ-ի գումարը, որը չի նախատեսել և հաշվի չի առել Նախարարությունը: **Հետևաբար, չկայացած մրցույթները և հետագայում համապատասխան որոշումների կայացումը հանգեցրել է պատվաստանյութերի ձեռքբերման ժամկետների երկարաձգման և մեկ անձից գնման հրատապության՝ կապված անասնահամաճարակային իրավիճակի կայունության ապահովման հետ: Հարկ է նշել, որ կազմակերպված մրցույթներին հիմնականում մասնակցել են այն կազմակերպությունները, որոնց հետ կնքվել է մեկ անձից գնման պայմանագրեր:**

## 16. Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման արդյունքային (կատարողական) ցուցանիշների կատարման վերաբերյալ

Հաշվեքննության ընթացքում ուսումնասիրվել են Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում միջցառման շրջանակներում Նախարարության կողմից 2021 թվականի արդյունքային /կատարողական/ ցուցանիշների վերաբերյալ ներկայացված հաշվետվությունը: Ուսումնասիրությամբ պարզվել է, որ կանխարգելիչ և ախտորոշիչ միջոցառումները իրականացվել են շեղումներով: Հաշվեքննությամբ համեմատվել են Նախարարության և ԳԾԿ-ի կողմից 2021 թվականի համար ներկայացված արդյունքային /կատարողական/ ցուցանիշների վերաբերյալ հաշվետվությունները՝ ձև 8: Ըստ ներկայացված հաշվետվությունների Նախատեսված և իրականացված միջոցառումների քանակային տարբերության պատճառները նույնպես տարբերվում են, որոնք ներկայացված են Հավելված 11-ում:

Այսպես, Դաբաղ, Սիբիրախտ, Խշխշան պալար և Հանգուցավոր մաշկաբորբ հիվանդությունների մասով առկա է տարբերություն տարեկան պլանի և հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի միջև՝ 87,000 միջոցառում /4,285,849-4,198,849/: Պետք է նշել, որ փաստացի իրականացված միջոցառումները 44,081 հատով ավել են իրականացվել հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանի նկատմամբ: Վերջինս պայմանավորված է պլանային ցուցանիշների կրճատման հետ:

Նախարարության կողմից 2021 թվականի արդյունքային /կատարողական/ ցուցանիշների վերաբերյալ ներկայացված հաշվետվության համաձայն տարբերությունը պայմանավորված է՝ «Շեղումը պայմանավորված է կայուն հակահամաճարակային իրավիճակի ապահովմամբ», իսկ ԳԾԿ-ի կողմից՝ «Շեղումը, մասնավորապես, պայմանավորված է մանր և խոշոր եղջերավոր կենդանիների անհասանելիությամբ՝ դրանց հաշվառման և համարակալման իրականացման բացակայությամբ», կամ «Շեղումը պայմանավորված է կայուն հակահամաճարակային իրավիճակը պահպանելու համար»:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ Դաբաղ հիվանդության նկատմամբ իրականացված կանխարգելիչ միջոցառումների տարբերությունը պայմանավորված է պատվաստանյութի գնման գործընթացի պլանավորված ժամկետների էական շեղումներով և նախատեսված քանակի կրճատմամբ: Սակայն համաձայն ներկայացված հաշվետվության պարզվում է, որ փաստացի իրականացվել է հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանով նախատեսվածից 17,166 հատ միջոցառում ավելի: ***/Գնման գործընթացի վերաբերյալ տեղեկատվությունը մանրամասն ներկայացված է սույն արձանագրության 1-ին կետում/:***

Հավելված 12-ում ներկայացվում է 2021 թվականի ընթացքում նախատեսված, ճշտված և փաստացի իրականացված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությունը: 2021 թվականի համար նախատեսված Դաբաղ

պատվաստանյութը առ 01.07.2021թ. դրությամբ՝ դեռևս բաշխված չի եղել: Նախարարությունը Դաբաղ պատվաստանյութի քանակի կրճատումը՝ 3,410,950 մլ-ից մինչև 3,012,770 մլ համարել է բավարար կայուն անասնահամաճարակային իրավիճակի պահպանման համար: Միաժամանակ Նախարարության կողմից 2021 թվականի վեց և ինն ամիսների համար ներկայացված հաշվետվություններում՝ պլանային ցուցանիշների փոփոխություն կապված քանակի կրճատման հետ չի իրականացվել: Ավելին, ինն ամիսների հաշվետվությունից պարզվում է, որ նախատեսված պլանային ցուցանիշներից ավել է իրականացվել 351,708 հատ միջոցառում /1,427,350-1,075,642/ և որպես տարբերության պատճառ նշելով՝ պայմանավորված կայուն համաճարակային իրավիճակի պահպանմամբ կատարվել են նախատեսվածից շատ ախտորոշիչ միջոցառումներ: Փոխարենը ճշտված պլանային ցուցանիշը փոփոխված ներկայացվել է տարեկան հաշվետվությունում:

Հաշվեքննությամբ պարզվել է, որ փաստացի իրականացված միջոցառումների քանակը գերազանցում է տարեկան ճշտված պլանային ցուցանիշին: Այսպիսով, Նախարարությունը Դաբաղ պատվաստանյութի ձեռքբերման քանակը կրճատելով արդյունքում իրականացրել է 17,166 հատ ավելի միջոցառում /1,898,248-1,881,082/:

## 17.ՀՀ էկոնոմիկայի նախարարության ներքին աուդիտի գործառույթի վերաբերյալ

Համաձայն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 2-րդ մասի՝ ներքին աուդիտն իրականացնում են կազմակերպության կառուցվածքում գործող ներքին աուդիտի ստորաբաժանման կամ հրավիրված՝ Օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 5-րդ կետով նախատեսված ցանկում ընդգրկված անձանցից ընտրության միջոցով:

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանրային հատվածի կազմակերպության ղեկավարն ապահովում է կազմակերպությունում ներքին աուդիտի համակարգի առկայությունը և գործունեությունը:

Հաշվեքննության ընթացքում պարզվեց, որ 2021 թվականի ընթացքում Նախարարությունում ներքին աուդիտի համակարգը փաստացի չի գործել: Ըստ այդմ՝ առկա է անհամապատասխանություն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների հետ:

## 18. Զբոսաշրջության զարգացման ծրագիր՝ 1190 ծրագրի Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող

## Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի շրջանակներում ՀՀ տարբեր մարզերում զբոսաշրջության հետ կապված ենթակառուցվածքների բարելավմանն ուղղված՝ 12001 միջոցառման վերաբերյալ

Համաձայն ՀՀ պետական բյուջեի 2021 թվականի կատարման վերաբերյալ ներկայացված հաշվետվության՝ 1190 Ծրագրի 12001 միջոցառման շրջանակներում տարեկան ճշտված պլանով նախատեսվել է 3,024,438.70 հազ. դրամ, դրամարկղային ծախսը և փաստացի ծախսը կազմել են 2,723,708.24 հազ. դրամ:

Նախարարության Զբոսաշրջության կոմիտեից ստացված տեղեկատվության համաձայն 2021 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ Տեղական տնտեսության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրի թվով 10 ենթածրագիր ավարտվել է, 9 ենթածրագիր գտնվում է շինարարության ընթացքում, մոնիթորինգի 1 ծրագիր՝ ընթացքի մեջ է, ևս 22 ենթածրագիր գտնվում է նախապատրաստման փուլում, Կառավարման մոդելների մշակման 1 ենթածրագրի մեկնարկը ընթացքի մեջ է:

Այսպիսով, սույն ծրագիրը ֆինանսավորվում է երկու աղբյուրից՝ ՀՀ պետական բյուջեից և Համաշխարհային բանկի կողմից, որն էլ հանդիսանում է գլխավոր ֆինանսավորողը: Ծրագրի իրականացման համար պատասխանատու ստորաբաժանումից՝ Նախարարության Զբոսաշրջության կոմիտեից հաշվեքննության իրականացման համար պահանջվել է ենթածրագրերի իրականացման համար շինարարական կազմակերպությունների ընտրության, շինարարական աշխատանքների ընթացքի, որակի վերահսկողության և անհրաժեշտ այլ փաստաթղթեր: Հաշվեքննողներին պահանջված տեղեկատվությունը չի տրամադրվել, քանի որ Զբոսաշրջության կոմիտեն պատասխանատու է ծրագրի շրջանակներում իրականացվող նախագծերի բովանդակության համար, և ենթածրագրերի իրականացման շինարարական աշխատանքների մասով փաստաթղթերը գտնվում են Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամում: Հետևաբար՝ տվյալ ծրագրի մասով հաշվեքննության իրականացումը դառնում է անհնարին:

# VII. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆինանսական կառույցներին

1. Նախարարությանը տրամադրել ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 7-ի N 184-Լ որոշմամբ հաստատված Ծրագրի 20-րդ կետի՝ 2-րդ ենթակետով սահմանված ՖԿ-ների կողմից ԳՖԿ-ին ներկայացված նպատակային մոնիթորինգի արդյունքների և 3-րդ կետով սահմանված՝ հայտնաբերված խախտումների վերաբերյալ տեղեկատվություն:

Նախարարությանը

2. Գյուղատնտեսական հումքի մթերումների գծով անհրաժեշտության դեպքում պահանջել լրացուցիչ փաստաթղթեր՝ հողի սեփականության վկայականներ, վարձակալության դեպքում հողի վարձակալության պայմանագրեր, ինչպես նաև համայնքից տեղեկանք հողի գործառնական նշանակության վերաբերյալ: Անասնագլխաքանակի անճշտություններից խուսափելու համար կատարել հաշվառում և համարակալում:
3. Վարկառուների կողմից վարկի սուբսիդավորման ժամանակահատվածում գյուղատնտեսական գործունեության դադարեցման ռիսկերը բացառելու նպատակով անհրաժեշտ է ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 7-ի N 184-Լ որոշման մեջ կատարել փոփոխություն՝ ավելացնելով վարկի սուբսիդավորման ժամանակահատվածում վարկային միջոցներով կառուցված կամ ձեռք բերված գույքի հետագա օտարումը սահմանափակող դրույթներ, որոնք կապահովեն գյուղատնտեսական գործունեության շարունակականությունը:
4. Առաջարկվում է արդյունքային /կատարողական/ ցուցանիշների վերաբերյալ ՀԱԲԼԾԿ-ի և ԳԾԿ-ի կողմից կազմված հաշվետվությունները ներկայացնել նույն ժամանակահատվածի կտրվածքով:

# VIII. ՀԵՏՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

| | Անհամապատասխանություն / խեղաթյուրում/ հսկողության գործընթացի | Վերացված է /վերացված չէ / ընթացքում է[2] | Հիմնավորումներ[3] | Նախորդ ժամանակաշրջաններ հաշվեքննության արդյունք |
|---|---|---|---|---|
| 1 | **Գյուղատնտեսության խթանման 1022 Ծրագրի՝ Գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում 12004՝ միջոցառման շրջանակներում իրականացված մոնիթորինգի վերաբերյալ**<br>***Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 201-Լ որոշման «Ծրագրի մոնիթորինգը և իրականացման ռիսկերի կառավարումը» բաժնի 33-րդ կետի պահանջների հետ, այն է՝ Ծրագրի մոնիթորինգն իրականացնում են ԳՖԿ-ն և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը՝ ՖԿ-ի կողմից ներկայացված տեղեկատվության և վարկառուների ընտրանքային ուսումնասիրության հիման վրա:***<br>Համաձայն ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 201-Լ որոշման «Ծրագրի մոնիթորինգը և իրականացման ռիսկերի կառավարումը» բաժնի 33-րդ կետի, ծրագրի մոնիթորինգն իրականացնում են ԳՖԿ-ն և Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը՝ ՖԿ-ի կողմից ներկայացված տեղեկատվության և վարկառուների ընտրանքային ուսումնասիրության հիման վրա: | | | |

2 Ընտրել երեք տարբերակներից մեկը/լրացվում է հաշվեքննության օբյեկտի ներկայացուցիչների կողմից/:

3 Ներկայացնել արդեն իսկ կատարված աշխատանքները վերացման ուղղությամբ, պարզաբանումներ չվերացման պատճառների վերաբերյալ՝ կցելով հիմնավորող փաստաթղթերը, ինչպես նաև գործողությունների ծրագիր՝ վերացման ժամանակացույցով ու պատասխանատուների ցանկով/լրացվում է հաշվեքննության օբյեկտի ներկայացուցիչների կողմից/:

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Մոնիթորինգի տեսակները՝ փաստաթղթային, այցելություններ և հարցումներ, ուղղությունները, ծավալը և նպատակայնության համապատասխանության պարամետրերը սահմանվում են ԳՖԿ-ի կողմից մշակված ներքին ընթացակարգով: Հաշվեքննությամբ պարզվել է, որ 2021թ. ընթացքում ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից տվյալ ծրագրի շրջանակներում մոնիթորինգ չի իրականացվել: ԳՖԿ-ի կողմից 2021թ. ընթացքում փաստաթղթային մոնիթորինգ է իրականացվել թվով 9 տնտեսավարողների վարկային փաթեթները, որի արդյունքում՝ ըստ ներկայացված հաշվետվությունների, վարկային միջոցները տրամադրվել և օգտագործվել են ծրագրի պահանջների շրջանակներում: | | | |
| 2 | **Գյուղատնտեսության խթանման 1022 Ծրագրի՝ Գյուղատնտեսական հումքի մթերումների /գնումների/ նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում 12004՝ միջոցառման շրջանակներում արձանագրված անհամապատասխանության և խեղաթյուրման վերաբերյալ**<br>***Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 28.02.2019թ. թիվ 201-Լ որոշմամբ հաստատված ծրագրի 23-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների հետ՝ վարկառուների կողմից ներկայացված վարկերի սպացման համար հիմք հանդիսացող տեղեկատվության /ձև 1/ և ֆերմերներին պատկանող փաստացի անասնագլխաքանակի և հողերի քանակների միջև:***<br>Գյուղատնտեսական հումքի մթերումով զբաղվող թվով ինը կազմակերպությունների՝ «Սպայկա», «Միլկաթ», «Ամասիայի գլխավորող պանրագործարան» և «Աշոցքի պանրի գործարան» «Գետափի գինու կոնյակի գործարան» ՍՊԸ-ներին, «Արտաշատ-վինկոն», «Արարատի գինու կոնյակի գործարան», «Վեդի-Ալկո» և «Ոստան գինու գործարան» ՓԲԸ-ներին Ծրագրի շրջանակներում ֆինանսական կազմակերպությունների կողմից տրամադրվել է 12,298,978.00 հազ.դրամ վարկ հումքի մթերման համար: ՀՀ պետական բյուջեից 2021 թվականի ընթացքում սուբսիդավորվել է 717,959.18 հազ.դրամ վարկի տոկոսագումար:<br>Նշված անհամապատասխանությունը հանգեցրել է խեղաթյուրման ՀՀ պետական բյուջեից 2021 թվականի ընթացքում սուբսիդավորված 717,959.18 հազ.դրամ տոկոսագումարների չափով: | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | | |
| 3 | **Գյուղատնտեսության խթանման 1022 Ծրագրի՝ Գյուղատնտեսական վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում՝ 12001 միջոցառման շրջանակներում վարկառու տնտեսվարողների վարկային միջոցների նպատակային օգտագործման մոնիթորինգի արդյունքների և հայտնաբերված խախտումների հաշվետվության վերաբերյալ**<br>***Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 7-ի N 184-Լ որոշման «Ծրագրի մոնիթորինգը» բաժնի 20-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջների հետ, այն է՝ «Ֆինանսական կառույցը նախատեսում է հաշվետվություն ներկայացնել ԳՖԿ-ին և Նախարարությանը: Հաշվետվությունը պետք է պարունակի մանրամասն տեղեկատվություն ծրագրի ընթացքի մասին, այդ թվում՝ տեղեկատվություն իրականացված նպատակային մոնիթորինգի արդյունքների մասին.»***<br>Հաշվեքննիչ պալատը գրությամբ դիմել էր Նախարարությանը որպեսզի տրամադրվի ՀՀ կառավարության 2019 թվականի մարտի 7-ի N 184-Լ որոշմամբ հաստատված Ծրագրի 18-րդ կետով սահմանված վիճակագրական տվյալների շտեմարանի, 20-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված ՖԿ-ների կողմից ԳՖԿ-ին ներկայացված նպատակային մոնիթորինգի արդյունքների և 3-րդ կետով սահմանված՝ հայտնաբերված խախտումների վերաբերյալ տեղեկատվություն: Սակայն Նախարարության պատասխան գրությամբ, տրամադրվել է միայն վիճակագրական տվյալների շտեմարանը, իսկ ՖԿ-ների կողմից ԳՖԿ-ին ներկայացված նպատակային մոնիթորինգի արդյունքների և հայտնաբերված խախտումների վերաբերյալ տեղեկատվությունը չի ներկայացվել: | | | |
| 4 | **Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում տարածաշրջանները սպասարկող համաճարակաբանների և անասնաբույժների հետ կնքված պայմանագրերի վերաբերյալ**<br>***Առկա է անհամապատասխանություն «Գնումների մասին» ՀՀ օրենքի և կնքված դրամաշնորհի պայմանագրի 2.4.7. կետի պահանջների հետ, այն է.*** | | | *Կրկնվող կետ* |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | *«Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան»:*<br>***Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու մասին» թիվ 526-Ն որոշման 16-րդ և 17-րդ կետով սահմանված պահանջների մասով՝ գնման առարկան՝ Ծրագրով նախատեսված ծառայությունները, չի ներառվել գնումների պլանում:***<br>Անասնաբույժների և համաճարակաբանների հետ պայմանագրերը կնքվել են առանց մրցույթի կազմակերպման՝ շրջանցելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի պահանջները, ինչպես նաև ԳԾԿ-ի գնումների պլանում ներառված չէ տվյալ ծառայությունների ձեռքբերումը: Տարածաշրջանները սպասարկող համաճարակաբանների և համայնքները սպասարկող անասնաբույժների հետ առանց մրցույթի պայմանագրի կնքման հետևանքով չի պահպանվել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջները, այն է. «Գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում»: | | | |
| 5 | **Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում ԳԾԿ-ի և ՀԱԲԼԾԿ-ի կողմից 2021 թվականի ընթացքում ներկայացված հաշվետվությունների քանակային /արդյունքային/ ցուցանիշների վերաբերյալ**<br>***Առկա է շեղում Ծրագրի միջոցառման գծով արդյունքային /կատարողական/ ցուցանիշների վերաբերյալ 01.01.2021-31.12.2021թ. ժամանակահատվածի համար ԳԾԿ-ի և ՀԱԲԼԾԿ-ի կողմից ներկայացված հաշվետվությունների միջև:***<br>2021 թվականի համար ըստ ներկայացված հաշվետվությունների բրուցելյոզի ախտորոշման գծով ԳԾԿ-ի կողմից ներկայցված նմուշառումների և ՀԱԲԼԾԿ-ի կողմից իրականացված լաբորատոր փորձաքննությունների տարբերությունը կազմում է 3,876 հատ, որը գումարային արտահայտությամբ կազմում է 1,248.81 հազ.դրամ:<br>***Առկա շեղումները հանգեցրել են խեղաթյուրման 1,248.81 հազ.դրամ*** | | | Կրկնվող կետ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | *գումարի չափով:* | | | |
| 6 | **Անասնաբուժական ծառայություններ՝ 1116 Ծրագրի Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում՝ 11001 միջոցառման շրջանակներում Նախարարության և ԳԾԿ-ի միջև կնքված պայմանագրով սահմանված հսկողական մեխանիզմների վերաբերյալ**<br>***Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի 2.4.4 կետով և 3-րդ մասով սահմանված դրույթների հետ:***<br>«Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» միջոցառման շրջանակներում 2021 թվականի հունվարի 26-ին Նախարարության և ԳԾԿ-ի միջև կնքված «Պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության գումարների օգտագործման մասին» թիվ 17-21 պայմանագրով /այս գլխում այսուհետ՝ Պայմանագիր/ նախատեսվել է իրականացնել հանրապետության բոլոր համայնքներում կենդանիների վարակիչ հիվանդությունների կանխարգելմանը ուղղված 7 հիվանդությունների /բրուցելյոզ, տուբերկուլյոզ, լեյկոզ, սիբիրախտ, դաբաղ, խչխշան պալար, հանգուցավոր մաշկաբորբ/ նկատմամբ 5,168,605 պատվաստումներ և ախտորոշիչ միջոցառումներ:<br>Պայմանագրի 2.4.4. կետով սահմանված է, որ ԳԾԿ-ն պարտավոր է Նախարարությանը ծրագրի ավարտից հետո ներկայացնել ամփոփ հաշվետվություն: Ինչպես նաև Պայմանագրի 3-րդ մասով սահմանվում է իրականացնել մոնիթորինգ:<br>Հաշվեքննողների կողմից Պայմանագրով սահմանված վերոնշյալ դրույթների իրականացման վերաբերյալ պահանջված տեղեկատվությունը չի տրամադրվել: | | | |
| 7 | **Ճգնաժամերի հակազդման և արտակարգ իրավիճակների հետևանքների նվազեցման և վերացման՝ 1224 ծրագիր Կորոնավիրուսով (COVID-19) պայմանավորված մեկուսացված անձանց կեցության ապահովում 11001 միջոցառման վերաբերյալ**<br>***Առկա է շեղում բուժհաստատություններից բուժում ստացող պացիենտների, բուժանձնակազմի և ՀՀ էկոնոմիկայի նախարարության հաշիվ-ապրանքագրերին կից տեղեկատվությամբ ներկայացված թվաքանակների միջև:***<br>2021 թվականի 1,130,712.42 հազ. դրամի փաստացի ծախսերը սննդամթերքի | | | *Կրկնվող կետ* |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | մատակարար կազմակերպությունների կողմից հաշիվ-ապրանքագրերով դուրս են գրվել 2021 թվականի հունվար - ապրիլ ամիսների ընթացքում, սակայն սննդի տրամադրումը կատարվել է 2020 թվականի դեկտեմբեր և 2021 թվականի հունվար-ապրիլ ամիսների ընթացքում:<br>Սննդամթերքի մատակարար կազմակերպության և բժշկական հաստատությունների կողմից կազմվել է ամփոփ հաշվարկի աղյուսակներ՝ մատակարարված և ընդունված սննդամթերքի վերաբերյալ, որը Զբոսաշրջության կոմիտեի կողմից կատարման արդյունքների վերաբերյալ դրական եզրակացություն ստանալուց հետո տրվել է Նախարարության ֆինանսական բաժին վճարում կատարելու համար:<br>Հաշվեքննության ընթացքում ՀՀ առողջապահության նախարարությունից ստացվել է տեղեկատվություն՝ բժշկական հաստատություններում նշված ժամանակաշրջանի համար բուժում ստացած պացիենտների, բուժանձնակազմի թվաքանակի և մատակարարներից ստացված սննդամթերքի չափաբաժինների վերաբերյալ, որը համեմատվել է 20.12.2020 – 30.04.2021թթ. ընկած ժամանակահատվածում սննդամթերքի մատակարար կազմակերպությունների կողմից դուրս գրված հաշիվ-ապրանքագրերին կից ներկայացված տեղեկատվության հետ: ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրված լրացուցիչ տեղեկատվության համաձայն՝ ըստ հաշիվ-ապրանքագրերին կից ամփոփ աղյուսակների մատակարարվել է 303,224 չափաբաժին սննդամթերք, սակայն ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության համաձայն ստացվել է 287,627 չափաբաժին սննդամթերք կամ ավելին է մատակարարվել 15,597 չափաբաժին, գումարային արտահայտմամբ՝ 1,145.78 հազ.դրամ /459.88+685.90/:<br>***Առկա շեղումը և հսկողության գործընթացի թերացումները հանգեցրել խեղաթյուրման 1,145.78 հազ.դրամ գումարի չափով:*** | | | |
| 8 | **Կորոնավիրուսի (COVID-19) տնտեսական հետևանքների չեզոքացման հետևանքով տրամադրված վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման 1224-12001 Ծրագիր մոնիթորինգի վերաբերյալ**<br>***Առկա է անհամապատասխանություն Պայմանագրի 6-րդ գլխի 6.1 կետով սահմանված պահանջների մասով:***<br>Նախարարության և Ֆինանսական կառույցների միջև կնքված Պայմանագրի 6-րդ | | | *Կրկնվող կետ* |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | գլխի 6.1 կետի համաձայն՝ միջցառման մոնիթորինգն իրականացնում է Նախարարությունը: Ծրագրի ողջ ընթացքում Նախարարության կողմից չի իրականցվել մոնիթորինգ: | | | |
| 9 | **1058-11001 Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիտորինգ ծրագրի շրջանակներում Նախարարության թափուր հաստիքների վերաբերյալ**<br>***Առկա է անհամապատասխանություն «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի մասով, համաձայն որի, քաղաքացիական ծառայության պաշտոնը թափուր մնալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում պետք է հայտարարվի մրցույթ, ինչը չի իրականացվել:***<br>ՀՀ էկոնոմիկայի նախարարի 2021 թվականի հունվարի 25-ի թիվ 30-Ա հրամանով հաստատվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարության հաստիքացուցակը, որում ՀՀ էկոնոմիկայի նախարարի համապատասխան հրամաններով 2021 թվականի ընթացքում կատարվել են համապատասխան փոփոխություններ: Ըստ հրամանի՝ 25.01.2021թ. դրությամբ նախատեսվում է 459 հաստիքային միավոր, որից 112-ը եղել են թափուր պաշտոններ, որը կազմում է 24.4%: 01.06.2021թ. դրությամբ համաձայն նշված հրամանի հաստիքների թիվը նվազել է /կրճատվել է/ և կազմել է 390 միավոր, որից 87-ը թափուր պաշտոններ են, որը կազմում է 22.3%: Ուսումնասիրությամբ պարզվեց, որ 01.06.2021թ. դրությամբ 87 թափուր հաստիքներից 65-ը 01.12.2021թ. դրությամբ նույնությամբ մնացել են թափուր: | | | ***Կրկնվող կետ*** |
| 10 | **1058-11001 Էկոնոմիկայի ոլորտում պետական քաղաքականության մշակում, ծրագրերի համակարգում և մոնիթորինգ ծրագրի շրջանակներում Նախարարության աշխատակիցների պարգևատրման վերաբերյալ**<br>2021թ. ընթացքում ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակիցները պարգևատրվել են 411100 «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով նախատեսված գումարի խնայողություններից: Նշվածը հակասում է ***ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2007թ. հունվարի 9-ի «ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի հրամանով հաստատված ՀՀ բյուջետային և հանրային հատվածի հաշվապահական հաշվառման դասակարգումները և դրանց կիրառման ցուցումները հաստատելու մասին» N 5 հրամանի հավելված 16-ի պահանջներին:*** | | | ***Կրկնվող կետ*** |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | *Առկա է խեղաթյուրում 336,696.49 հազ.դրամի չափով:* | | | |